

Ա. Ս. ԴԱՐԻՔՅԱՆ

ՆԱՅԵՐԵՆԻ
ՆՈՐԱՆԱՅՏ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ՄԻ ՆՈՐ ԽՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ
1939



**АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА**

А. С. ГАРИБЯН

**НОВАЯ ГРУППА НОВООТКРЫТЫХ
АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ**

**ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1958**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ս. ԴԱՐԻՖՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ՄԻ ՆՈՐ ԽՈՒՄԲ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-
Դիմումային և ակադեմիայի համագործակց-
հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Ն Ա Խ Ա Յ Ա Ն

Հայերեն բարբառների՝ վերջին տարիներս հայտնաբերված «Հա» ճյուղը սկզբում ներկայացված էր մեկ՝ Քեսաբի բարբառով։ Համոզված լինելով, որ Քեսաբի բարբառը պետք է որ ունենար ընկերակիցներ, քանի որ հայ բարբառների ճյուղերը բարբառների ասոցիացիաներ են, մենք շարունակեցինք մեր ուսումնասիրությունները։ Այդ որոնումների առաջին արդյունքն ստացվեց 1953 թվականին, երբ հայտնաբերվեց Եղեսիայի կամ Ուրֆայի բարբառը, որը պատկանում է «Հա» ճյուղին և որի նկարագրությունը տալիս ենք սույն պրակում։

Անտիոքի շրջանում հայտնաբերվեց բարբառների մի հարուստ օջախ։ Հ. Աճառյանը այդ օջախի բոլոր բարբառները համարում էր մեկ բարբառ և անվանում «Սյուրիո բարբառ»։ Սակայն մոտիկից կատարվող ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ բարբառների մեջ հաճախ ավելի մեծ տարբերություններ կան, քան Արարատյան և Ղարաբաղի կամ Արարատյան և Կարնո բարբառների միջև։ Ուստի այդ հարցը լուծելու ջանքերը պսակվեցին հաջողությամբ։

Անտիոքի շրջանում գտնվեցին Սվեդիայի բարբառը իր ենթաբարբառներով, Բեյլանի բարբառը իր ենթաբարբառներով և Քեսաբի բարբառը իր ենթաբարբառներով¹։ Քանի որ Անտիոքի շրջանը բաժանվում էր չորս ենթաշրջանների՝ Սվեդիայի, Բեյլանի, Քեսաբի և Ջըսըր-Շուղուրի, որոնցից երեքի լեզվական վիճակը մեզ համար պարզ էր, մնում էր պարզելու Ջըսըր-Շուղուրի շրջանի հայախոս գյուղերի բարբառային վիճակը։

Հ. Աճառյանը իր հայ բարբառագիտություն աշխատության մեջ բերել էր մի նմուշ այդ շրջանի Արամո գյուղի խոսվածքից.

¹ «Հայերենի մի քանի նորահայտ բարբառներ», Խ. Արովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», № 4, 1955 թ.։

ընթերցողը համարյա չի կարող հսկանալ այդ նմուշը, եթե չիմանա, որ դա հայերեն է¹:

Այդ խոսվածքը մեզ շատ էր հետաքրքրում, բայց Արամո գլուղից որևէ անձի չէինք ճանաչում և չէինք կարողանում գտնել: Այս հարցում ևս, ինչպես Անտիոքի շրջանում մյուս գյուղերի բարբառների հայտնաբերման գործում, մեզ օգնեց հայ բարբառագիտության բարեկամ Ալեքսանդր Փաշայանը: Նրա ջանքերով ծանոթացանք Արամոյի բնակիչ 75-ամյա Ալեքսան Հարությունյանի հետ: Պարզվեց, և այդ հարցը պարզեց Ալեքսանդր Փաշայանը, որ Շրեանի մոտ Նոր Արեշ արվարձանում բնակվում են 120 արամոյացիներ: Դրանցից Արամոյի բարբառի լավագույն գիտակ Ալեքսանդր Հարությունյանը սիրով օգնեց մեզ ծանոթանալու այդ բարբառին:

Ուսումնասիրություններից պարզվեցին, որ այդ բարբառը պատկանում է «Հա» ճյուղին, կազմելով սահմանականի ներկան հետևյալ կերպ. հայ բառգայմ, հայ բառգայս, հայ բառգա—պառկում եմ, պառկում ես և այլն. հայ համբրեյմ, հայ համբրյես, հայ համբրեյ... համբում եմ, համբում ես և այլն:

Այսպիսով գտնվեց «Հա» ճյուղի երրորդ բարբառը, որով այդ ճյուղը դարձավ հայ բարբառների իրավագուր ճյուղերից մեկը: Այդ ճյուղի մասը կազմող Արամոյի բարբառը ոչ միայն մեծ հետաքրքրություն ներկայացնող, այլև հայագիտության պրոբլեմները լուծելու ամենամեծ փաստեր ունեցող բարբառն է:

Նույն Ալեքսանդր Փաշայանի միջոցով ծանոթացանք նաև հայրենադարձ ինժեներ Գրիգոր Գյոզալյանի հետ, որը Քաբուսիի բնակիչ է եղել: Նրա միջոցով ծանոթանալով այս գյուղի խոսվածքին՝ պարզեցինք, որ այդ գյուղը ևս խոսում է ծանրակշիռ առանձնահատկություններ ունեցող մի անկախ բարբառով: Ահա այս երեք բարբառների համառոտ նկարագրությունն է, որ մենք տալիս ենք մեր սույն պրակում, հավակնություն չունենալով դրանով սպառելու այդ բարբառների ուսումնասիրությունը: Նախքան այդ բարբառների նկարագրությանն անցնելը՝ ավելորդ չենք գտնում վիճակագրական և աշխարհագրական մի շարք տեղեկություններ տալու Անտիոքի շրջանի, ինչպես և Հյուսիսային Սիրիայի հայկական գյուղերի մասին:

¹ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայ բարբառագիտություն, էջ 213:

ա. Քեսաբի շրջան

Այս շրջանի մեջ մտնում են 11 հայկական գյուղեր, որոնց մասին, ինչպես և մյուս շրջանների մասին Ա. Փաշայանը հաղորդում է հետևյալ վիճակագրական տեղեկությունները (տվյալները վերաբերվում են 1946 թ.):

1. Քեսաբ—1500 տնտեսություն, Գալաղուրան—400 տնտ., Զինար—100 տնտ., Քյորքինա—100 տնտ., Իգիզ-Օլուզ—75 տնտ., Ասգյուրա—50 տնտ., Սեաղբյուր—50 տնտ., Բաղճաղազ—40 տնտ., Ֆակհասան—50 տնտ., Դյուզաղաչ—25 տնտ., Բաշուրտ—15 տնտ.:

բ. Սվեդիայի շրջան

Բիթիաս—300 տնտ., Հաջի-Հաբիրլի—400 տնտ., Յողուն Փլուզ—500 տնտ., Խորբեզ—400 տնտ., Քարուսիե—300 տնտ., Վազրֆ—200 տնտ., Չավլիկ—50 տնտ., Մաղարաճըկ—100 տնտ., Վեբին Ազիր—30 տնտ., Սաորին Ազիր—20 տնտ. և Զելթունիյե—50 տնտ.:

գ. Բեյլանի շրջան

Այդ շրջանում կան հետևյալ հայկական գյուղերը. Բեյլան, Աթրկ, Սողանջի, Բալըղաստաղ, Գյոզալլի, Դալիրմանդարա, Դանլիդարա, Նարգիզլիզ, Ֆարթըսլը, Սովուկ-Օլուք: Այս գյուղերից հայտնի է, որ Բեյլանը ունեցել է 400 տնտ., Սովուկ-Օլուքը—200 տնտ. իսկ Աթրկը—300 տնտ.: Մնացած գյուղերի բնակչության թիվը առույգ հայտնի չէ:

դ. Արամոյի կամ Զրսըր-Շուղուրի շրջան:

2. Արամո—150 տնտ., Դընիմիե—150 տնտ., Դընէլ—200 տնտ., Յագուբիե—200 տնտ., Արֆալու—15 տնտ.:

Ինչպես գիտենք, Քեսաբի, Սվեդիայի և Բեյլանի շրջանները խոսում են առանձին բարբառներով: Այժմ հայտնի է դառնում, որ Զրսըր-Շուղուրի շրջանը, որի մեջ մտնում է Արամո գյուղը, նույնպես խոսում է ինքնուրույն բարբառով, թեև գյուղերի մեծ մասը այժմ արաբախոս է: Ստույգն այն է, որ Արամոյի բնակչությունը պահպանել է իր բարբառային լեզուն: Սվեդիայի մեջ մըտնող Քարուսիե գյուղը ևս խոսում է մի առանձին բարբառով: Հետագայի ուսումնասիրությունները, որոնք պետք է ուղղված լինեն այդ շրջանների բարբառային քարտեզը կազմելու կողմը, հավանական է, երևան բերեն առանձին գյուղեր, որոնք նույնպես խոսում են անկախ բարբառներով կամ անկախ ենթաբարբառներով, թույլ առաջիկա այդ շրջաններում մենք գտնում ենք 5 ինքնուրույն

բարբառներ, որոնցից նկարագրված են Քեսարի, Սվեդիալի և Բել-
լանի բարբառները: Այս պրակում նկարագրվում են Արամուլի և Քա-
րունիի բարբառները, այլև այլի վաղ հայտնաբերված Եդեսիայի
բարբառը, որ գտնվում է Հյուսիսային Միջագետքում:

Հեղինակ

1. ԱՐԱՄՈՅԻ ԲԱՐԲԱՌԸ

Արամոն գտնվում է Հյուսիսային Սիրիայում և մտնում է Անթաքիա-Ջըսըր-Շուղուրի շրջանի մեջ: Դա մոտավորապես պատմական Ասորիքի հյուսիս-արևմտյան մասումն է: Արամոն շրջապատված է արաբական գյուղերով: Նրա շրջանում գտնվում են հետևյալ գյուղերը՝ Դընիմիե (150 տնտեսություն), Արֆալու (15 տնտ.), Դընէլ (200 տնտ.), Յագուբիե (200 տնտ.): Սովետական Հայաստանում գտնվում են 120 շունչ արամոցացիներ, որոնք բնակվում են հիմնականում Նոր Արեշում: Չնայած, որ Արամո գյուղը գտնվում է արաբական գյուղերի հոծ բազմություն մեջ, բայց նա պահպանել է իր բարբառը: Արամոյի բոլոր բնակիչները կատարելապես տիրապետում են արաբերենին և արաբների հետ, հաճախ նաև միմյանց հետ, խոսում են եղել արաբերեն լեզվով, սակայն իրենց տնային լեզուն հայերենն է, որ նրանք գործ են ածում շատ սիրով: Ալեքսան Հարությունյանի ասելով Թուրքիայի տիրապետության ժամանակ փորձեր են կատարել արգելիլու հայերեն լեզուն, բայց բնակիչները համառորեն պահպանել են: Հայերեն լեզուն նրանք օգտագործել են նաև ծածկախոսական նպատակներով, արաբների ներկայությամբ հայերեն են խոսել այն դեպքում, երբ կարիք են գգացել, որ իրենց ասածը նրանք չհասկանան:

Ալեքսան Հարությունյանը, ինչպես ասացինք, լավ տիրապետում է Արամոյի բարբառին, դարմանալի նրբությունը ճանաչում է հայերեն բառերը, առանց սխալի տարբերելով արաբական բառերից. սովորաբար մեր բարբառները, լուրացնելով օտար բառերը, բոլորովին մերում են իրենց մեջ և հայերեն բառերի ու նրանց մեջ տարբերություն չեն դնում, օտար բառը շատ քիչ դեպքերում են ճանաչում: Մինչդեռ Ալեքսան Հարությունյանը առանց սխալի բնորոշում է հայերեն բառերը արաբե-

րենից. անգամ հին ասորերեն բառերը, որոնք պահպանվել են հայերենի մեջ, համարելով հայերեն, տարբերում է արաբերենից:

Արամոյի բարբառում արաբերեն բառերը կարելի է հաշվել հազարներով, իսկ հայերեն բառերը շուրջ հազարի սահմաններում: Սակայն այդ բառերը կազմում են կենսական անհրաժեշտություններ կազմող բառապաշար, այսպես կոչված բառային հիմնական ֆոնդը:

Բոլոր գերանունները հայերեն են, հայերեն են նաև թվականները մինչև 70, իսկ 70, 80, 90 բառերը արաբերեն են. թվականները դասականները արաբերեն են:

Քերականական կառուցվածքի մեջ արաբերենի որևէ հետք չկա: Այդ ամենը հիմք են տալիս ասելու, որ Արամոյի բարբառը մնում է իբրև հայերեն լեզվի բարբառ:

Արամոյի բարբառի հնչյունական կազմությունը խիստ տարբեր է թե՛ արևմտահայ գրական լեզվից, թե՛ արևելահայ գրական լեզվից և թե՛ գրաբարից: Մեր վերջին պնդումը պայմանական է, որովհետև գրաբար լեզվի հնչյունական կազմության մասին դժվար է որոշակի խոսք ասել, քանի որ մենք միայն գրավոր աղբյուրներով ենք որոշում նրա որակը, իսկ գրավոր աղբյուրները կարող են միայն մոտավոր գաղափար տալ հնչյունների մասին:

Արամոյի բարբառում շեշտի տակ եղած հնչյունները կամ երկբարբառ են, կամ երկար ձայնավոր, օրինակ.

Իլալը > ալլուր, լախսուու > ախու, աձձէլլ > ածել, ազոօու — ակուս, ուղ — աղ, ուղի — աղը, ամօուր — ամուր, անումբ — ամպ, համօու — հիմա, իրէլս — երես և այլն:

Արամոյի երկբարբառները իջնող բնույթ ունեն, այսինքն՝ շեշտն ընկնում է երկբարբառի առաջին բաղադրիչի վրա:

Արամոյի բարբառում երկբարբառները մասամբ հիշեցնում են գրաբարին, բայց մեր կարծիքով նրանք ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվին, հնդեվրոպական նախալեզվի հետ նույնն են Արամոյի բարբառի երկար ձայնավորները: Հայտնի էր, որ հնդեվրոպական նախալեզուն ուներ 18 երկբարբառ, երեք երկար և երեք կարճ ձայնավոր ā, ō, ē, a, o, ē: Թվում է, թե այդ պետք է բացատրել հնդեվրոպական լեզվի երաժշտական շեշտով: Մեր կարծիքով, Արամոյի բարբառի այս վիճակը, այսինքն՝ շեշտի տակ պարզ հնչյուն չունենալը, նույնպես պետք է բացատրել այդ բարբառում գոյություն ունեցող երաժշտական շեշտով: Համարյա հայերենի բոլոր ձայնավորները վերածվում են երկբարբառի և այդ կատարվում է երաժշտական շեշտի ազդեցությամբ տակ:

Այդ հարցում Արամոյի բարբառը եզակի է մեր ամբողջ բարբառների մեջ: Նրա հետ մըցում է միայն Քաբուսիի բարբառը:

Բաղաձայնական սխտեմը ենթարկվում է տեղաշարժ-տեղափոխություն. $p > պ$, $t > տ$, $d > ծ$, $z > ճ$, $q > կ \parallel պ > բ$, $տ > դ$, $\delta > \delta(q) \delta > ջ$, $կ > գ$:

Այդ նշանակում է, թե Արամոյի բարբառի բաղաձայնական սխտեմը ավելի մոտ է հնդեվրոպական վիճակին, քան գրաբարինը, քանի որ գրաբարը տեղաշարժ է կատարել բոլոր երեք շարքերում, իսկ Արամոյի բարբառը պահպանել է հնդեվրոպական ձայնեղները:

Բայց Արամոյի բարբառը հնդեվրոպական շնչեղ ձայնեղները ենթարկել է երկու տեղաշարժի, այսինքն՝ մեկ շնչեղազրկել է, մեկ էլ ձայնեղազրկել:

Պահպանելով գրաբարի բոլոր աֆրիկատները, բացի «ծ» աֆրիկատից, Արամոյի բարբառը վերջինս պարզացնում է, վերածելով այն ձայնեղ սուլականի՝ գ-ի: Այստեղ ևս Արամոյի բարբառը հավատարիմ է մնում իրեն և հնդեվրոպական բաղաձայնական սխտեմին:

Հայտնի է, որ հայերենի ծ-ն առաջացել է հնդեվրոպական ետնալեզվային g^2 հնչյունից, որը հայերեն լեզվում պետք է տար «ձ» աֆրիկատը, սակայն առաջին տեղաշարժի ենթարկվելով՝ վերածվում է գրաբարի «ծ» աֆրիկատի:

Արամոյի բարբառը այդ տեղաշարժը չի կատարում, այլ հնդեվրոպական հնչյունը վերածում է «զ» ձայնեղի, ինչպես սլավոնական լեզուները:

Օրինակ՝ հնդ-եվր. $g^2 en$, սլավ. $zъnъ$, հայեր. ծին—ծնանել—Արամոյի բարբառ զնանելլ:

Ամենահետաքրքրականը Արամոյի բարբառի «ը» ձայնավորի գործածությունն է:

Բառավերջում «ը» ձայնավորը, որ գործածվում է իբրև հոգ, վերածվում է «ա» ձայնավորի. օրինակ՝ ըտկուլա > գդալը, գուվա > ծովը, տանուգա > դանակը:

Երբ այդ ձայնավորներին հաջորդում է բաղաձայն, որ լինում է սովորաբար հոգերից մեկը, այդ դեպքում այդ «ը»-ն վերածվում է «ի»-ի, օրինակ՝ ըտկուլիս > գդալս, գմվուգիս > գավակս, տանուգիս > դանակս: Բառասկզբին «ը» ձայնավորը գործածվում է շատ հաճախ: Երբ բառն սկսվում է երկու բաղաձայնով, Արամոյի բարբառը հազվադեպ դեպքում է սրանց արանքում արտասանում «ը», այլ սովորաբար սկզբին է դնում այդ ը-ն, որով մի-

անգամայն նմանվում է նախագրաբարյան հայերենին, օրինակ՝ ընտկուլա > գդալը, ըլվացվէլմ > ըվացվում եմ:

Ինչպես դիտենք, հայերեն լեզվի հին հատկությունն է եղել երկու բաղաձայնով սկսվող բառերից առաջ ավելացնել «ա» ձայնավորը: Այսպես, օրինակ, հնդեվրոպական բառերը, ինչպես և փոխառյալ շատ բառեր, եթե սկսվել են բաղաձայնով, ավելի ևս երկու բաղաձայնով, հայերենում ստացել են սկզբից «ա» ձայնավոր. օրինակ. stella—աստղ, plios—ալիք, mēns—ամիս, nomŋ—անուն և այլն:

Դրա հետեանքով հայերեն բարբառներում «ա»-ով սկսվող բառերի թիվը շատ մեծ է, ըստ Հ. Աճառյանի, կազմում է ամբողջ հայերեն բառերի 1/6-ը:

Հետագայում հայերեն լեզվի մեջ նոր օրենք է առաջացել, ըստ որի երկու բաղաձայնի արանքը մտել է «ը» ձայնավորը:

Արամոյի բարբառի աչգ հատկությունը, մինչև այժմ հայերենը պահպանել է ստ, սպ, սփ, սկ, սթ, վգ, վբ, շկ, շտ կապակցություններով սկսվող բառերում:

Շեշտից առաջ Արամոյի բարբառը սղումներ հաճախ կատարում է, բայց սովորաբար երկրարբառային հնչյունը պարզանում է և ստանում իր նորմալ արտասանությունը:

Մեր ընդհանուր տպավորությունն այն է, որ Արամոյի բարբառը հին հայերենի, գուցե և հնդեվրոպական ժամանակաշրջանի հայերենից հնչյունական շատ հատկությունների հետքերը պահպանել է:

Այդ հարցը դեռ քննելի է, երբ հնարավոր լինի Արամոյի բարբառի համեմատական ուսումնասիրությունը կատարել:

Խիստ հետաքրքրական է Արամոյի բարբառի ձևաբանությունը: Ձևաբանության շարադրման ընթացքում մենք ամեն դեպքում կաշխատենք նշել հետաքրքրական մոմենտները, բայց այժմ կարող ենք որոշակի ասել, որ Արամոյի բարբառը մեր բոլոր բարբառներից ամենամոտն է գրաբարին իր ձևաբանությամբ:

Այսպես, օրինակ, հայանի է, որ գրաբարի գոյականների սրոշյալ առման դեպքում ուղիղ խնդիրն ստանում էր «զ» նախդիրը, որ հաճախ ենք գտնում արևմտահայ մի շարք բարբառներում, հատկապես «կա» ճյուղի բարբառներում:

Սակայն Արամոյի բարբառը գրաբարի քերականության այս հատկությունը պահպանել է լիակատար չափով. որոշյալ առման ուղիղ խնդրի գործածությունը Արամոյի բարբառում միշտ ստանում է «զ» նախդիրը. օրինակ՝

Ըիս առա ի քինի զթննխթա¹: Իրգնուն հալ վարար ա զլայսա¹:
Անորոշ առման դեպքում ուղիղ խնդիրը գործածվում է
առանց «զ» նախդիրի. օրինակ՝

Ըիս առա ի քինի թննխթա²:

Երբ ուղիղ խնդրին նախորդում է որևէ լրացում, Արամոչի
բարբառը, գրաբարի նման, «զ» նախդիրը տեղափոխում է այդ
լրացման վրա. օրինակ՝

Վուղա զը գարտոնում զառ թննխթա³:

Աղուր ըիս զը գարտոնում զառ թննխթա⁴:

Ավելի հետաքրքրական է այն երևույթը, երբ «զ»-ի գործածու-
թյունը լինում է գոյականին հետադառ:

Եթե ստորոգյալն ընկնում է ուղիղ խնդրից հետո, ապա
ուղիղ խնդիրը ստանում է «զ» նախդիրը, բայց ստորոգյալից հետո
նույնպես դրվում է այդ նախդիրը, բայց ինչ որ «ի» դերանվան
վրա, որ ստանում է «զա» ձևը.

Ըիս զամ զանուղա բառըցնէյմ զան—ես իմ զավակին պառ-
կեցնում եմ:

Արդյոք այստեղ մենք պահպանված չունենք հնդեվրոպական
ցուցական դերանունների „i“ արմատը (Արամոչի բարբառի բաց
վանկում «ի»-ն վերածվում է «ա»-ի):

Ավելի հետաքրքրական է «ի» նախդիրի գործածությունը Արա-
մոչի բարբառում: Հայտնի է, որ գրաբարում «ի»-ն գործածվում է
հայցականի հետ գործողություն ուղղություն ցույց տալու համար,
տրականի հետ (եզակի) դադար կամ որևէ բանի մեջ գտնվել
ցույց տալու համար, նույնը և հոգնակի հայցականի հետ. օրինակ,
երթամ ի տուն, կեամ ի տան:

Բացառականի հետ «ի»-ն գործ էածվում ամեն դեպքում,
երբ արտահայտում է նրա հիմնական ֆունկցիան, այսինքն՝ գոր-
ծողության հեռացման, մեկնման, ելման առարկա ցույց տալու հա-
մար (զամ ի տանէ, ելանէր յաշխարհէն):

Հազվագյուտ դեպքում «ի»-ն գրաբարում գործ էր ածվում
գործողության միջոց ցույց տալու համար, այսինքն՝ արտահայտելու
համար գործիական հոլովի հիմնական ֆունկցիան. օրինակ՝ ի
ձեռն—միջոցով, ձեռքով:

¹ Ես քեզնից դիրքն առա: Ես երեկոյան վառում էի լույսը:

² Ես քեզնից դիրք առա:

³ Վաղը ես այս գիրքը կկարդամ:

⁴ Ես այս գիրքը լավ կկարդամ:

Այդ բոլոր գործածութիւնները կան Արամոյի բարբառում և աշխարհի հարազատութեամբ, ինչպէս գրաբարում, հաճախ ալիքի հետեւողական, քան գրաբարը:

Վերցնենք օրինակներ.

1. Ի-ն տրականի հետ նշանակում է հանգում:

Ըիս մօղգրննօում ի դէննա—ես մոտենում եմ տանը:

Հիդ ամ զանլուգա կոնցօունք յանօննց դէմնա—իմ զավակի հետ գնացինք նրանց տունը (ախտեղ՝ ուղղութիւն դեպի մի առարկա):

Ախտեղ աեսնում ենք, որ «ի» նախդիրը տեղափոխվում է նախադրավոր բառի լրացչալից առաջ, ինչպէս գրաբարում, և, երբ բառն սկսվում է ձայնավորով, «ի» նախդիրը վերածվում է «յ»-ի, ինչպէս գրաբարում:

Նստայմ ի դէմնա—նստեմ ի տան, նստում եմ տանը:

Ախտեղ «ի» նախդիրը ցույց է տալիս դադար, ինչպէս և գրաբարում:

2. «Ի»-ն տրականի հետ Արամոյի բարբառում նշանակում է նաև վրա, մակերեսին. օրինակ՝ Ի բադէյն կրուձ իր տարիկ—պատին գրված էր պատմութիւն:

3. «Ի»-ն հայցականի հետ նշանակում է ուղղութիւն դեպի մի կողմ. օրինակ՝

Ըիս ուրթօում ի դէննա—ես երթամ ի տուն—ես գնում եմ տուն:

4. Ի-ն բացառականի հետ նշանակում է ելման կետ. օրինակ՝

Ըիս ուկօում ի դէմն ըմնէյ—ես գալիս եմ տնից:

Ի քինի առա զթննիսթա—ի քէն առի զթուղթ—քեզանից դիրքն առա:

Այդ ամենը միանգամայն նույն են «ի» նախդիրի գրաբարյան գործածութեան հետ:

Գրաբարում հազվագլուտ գործածութիւն ունի «ի»-ն հայցականի հետ գործիականի նշանակութեամբ (ի ձեռն):

Արամոյի բարբառում «ի» նախդիրի ախ գործածութիւնը շատ տարածված է և շատ հաճախակի: Իսկն ասած Արամոյի բարբառը գործիական հոլով չունի, նա գործածում է դրա փոխարեն «ի» նախդիրը հայցականի հետ. օրինակ՝

Ըլվացա զծարքս ի ճէուր—ջրով ձեռքս լվացի:

Ի տանուգա հայ զըդրէյմ զմայսա—գանակով կտրում եմ միսը:

Լիռն ի զառիր զազգուձ ի—լեռը ծածկված է ծառերով:

«Ի»-ն, այսպիսով, այլ և այլ հոլովների հետ արտահայտում է տրականի, հայցականի, բացառականի և գործիականի իմաստ, ինչպես որ էր գրաբարում:

Արդեն ասացինք, երբ «ի»-ն ընկնում է ձայնավորով սկսվող գոյականի առաջ, վերածվում է «յ»-ի և միանում գոյականին, ճիշտ այնպես, ինչպես գրաբարում:

Օրինակ. «Յաս տանուգրս գրդէլմ զմայսա—յայս դանակ կտրեմ զմիս—այս դանակով կտրում եմ միսը:

Արդէլմ յաշխուր—այրեմ յաշխարհի—այրում եմ աշխարհում:

Եթե գոյականը ունի լրացում, ապա «ի» նախդիրը դրվում է այդ լրացումից առաջ. եթե լրացումը սկսվում է ձայնավորով, «ի»-ն վերածվում է «յ»-ի և արտասանվում հարադատորեն «յ»: Այս հարցում նույնպես Արամոն միանգամայն հավատարիմ է գրաբարին. օրինակ՝

յաս դէռնա—յայս տուն—դեպի այս տունը.

յանծոնց դէռնա—դեպի նրանց տունը:

Ընդհանրապես նկատելի է, որ Արամոյի բարբառը հակում ունի կապերը նախադաս գործածելու. օրինակ՝ ի վրելվ թխթայն, ի ներքիվ թխթայն:

Արամոյի բարբառում կապերը գործ են ածվում նաև հետադաս, օրինակ՝ թխթին իրվայն:

«Ի» նախդիրի գործածության այսքան հարադատությունը գրաբարին վկայում է, որ գրաբար լեզուն կենդանի խոսակցական է եղել, իսկ նրա անօրինակ օրինաչափությունները՝ հատուկ կենդանի խոսակցական լեզվին: Արամոյի բարբառի այս և շատ այլ հարազատ գծերը գրաբարի հետ վերջնականապես լուծեցին գրաբարի կենդանի լեզու եղած լինելու երկար վիճարկվող պրոբլեմը:

Արամոյի բարբառի դերանունների գործածության մեջ ևս նկատելի է գրաբարի նմանությունը:

Հետաքրքրական է հոդերի գործածությունը:

Հայտնի է, որ գրաբարում, եթե ցուցական դերանունը հետադաս է, նրա արմատական բաղաձայնը միացվում է նախորդող գոյականի հիմքին, օրինակ՝

Տունս այս, տանս այնորիկ, տանս այմիկ և այլն.

Տունդ այդ, տանդ այդորիկ, տանդ այդմիկ և այլն:

Արամոյի բարբառում ցուցական դերանունը նախադաս է, բայց հաջորդող գոյականը ստանում է այն դերանվան արմատա-

կան բաղաձայնը, որը գործածվում է գոյականի հետ, ինչպես գրաբարում. օրինակ՝

նօս լնա ըսկուլիս հայ ուղա—նա այս գգալով(ս) ուտում է:
Ինօս լնգ ըսկուլիգ հայ ուղիր—նա այդ գգալով(դ) ուտում էր:
Ինօս լան ըսկուլա հայ ուղիր—նա այն գգալով(ն) ուտում էր:
Ինօս լնա ըսկալնալս հայ ուղիր—նա այս գգալներով(ս) ուտում էր:

Ինօս լնգ ըսկալնալգ հայ ուղիր—նա այդ գգալներով(դ) ուտում էր:

Ինօս լան ըսկալնալն հայ ուղիր—նա այն գգալներով(ն) ուտում էր:

Արամոյի բարբառի նմանությունը գրաբարին երևում է նաև բալերի գործածություն մեջ:

Այսպես, օրինակ, սովորական ներկայի համար Արամոյի բարբառում գործածվում է գրաբարյան ներկան, օրինակ՝

Ըիս համօս հայ բառգալմ—ես հիմա պառկում եմ:

Ըիս ամմըննուր բառգալմ—ես ամեն օր պառկում եմ (պառկեմ):

Ըիս համօս հայ վառեյմ զլալսա—ես հիմա վառում եմ լույսը:

Ըիս ամմըննուր վառեյմ զլալսա—ես ամեն օր վառում (վառեմ) եմ լույսը:

Այսպես է նաև անցյալ անկատարը.

Ըիս հիրա ամմըննուր բառգար ա—ես հերոս ամեն օր պառկում էի:

Ըիս հիրա ամմըննուր վառար ա զլալսա (ես հերոս ամեն օր վառում էի լույսը):

Միայն ներկայի համար, երբ ուզում է ցույց տալ ընթացքի մեջ կողող գործողությունը, այդ դեպքում ավելացնում է «հալ» բառ-մասնիկը, որ տեսանք վերևում: Ավելացնենք նաև անցյալ անկատարի մի օրինակ էս.

Ըիս իրգաունա հայ բառգար ա—ես երեկոյան պառկում էի:

Ըիս ամմըննուր իրգաունա բառգար ա—ես ամեն օր երեկոյան պառկում էի:

Այն դեպքում, երբ սովորական ներկայի բաժն սկսվում է ձայնավորով, նա ստանում է սկզբից «գ» մասնիկը. օրինակ

ըիս ամմըննուր գասէյմ:

Համեմատելու համար վերցնենք «լալ» բալի անցյալ կատարյալի ձևերը գրաբարում և Արամոյի բարբառում, հաշվի առնելով վերջինիս հնչյունական օրենքները:

Գրաբար

Արամոյի բարբառ

լացի

լացա (լացի)

լացեր

լացէլը (լացեր)

կլաց

իլուց (կլաց)

լացաք

լացօունք (լացանք)

լացիք

լացաք (լացիք)

լացին

լացալն (լացին)

Նմանութիւնը կատարելաւ է, չհաշվելով հոգնակի առաջին գեմքի «ն»-ն:

ՀՆԶՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Արամոյի բարբառի ձայնավորները շատ մեծ տարբերութիւն ունեն գրաբարից: Ինչպէս ասել ենք, շեշտի տակ պարզ հնչյունները վերածվել են երկբարբառների կամ էլ՝ երկար ձայնավորների. ա > օու, էօւ, ու. և > էլ, ըէ, ըիլ. ի > ալ. էլ.

ո > օու, օու, օօ, էօւ. ու > օու, էօւ:

Եթե շեշտի տակ ձայնավորը մնում է, նա արտասանվում է երկար¹:

Երկբարբառները պարզացած են, կամ վերածված են մի ալլ երկբարբառի:

Արամոյի բարբառում շատ առատ է ձայնավորների և երկբարբառների քմայնացումը (օօ, օ, օւ, էօւ, օօ):

Ձայնավորների փոփոխութեան ընդհանուր պատկերը հետևովալն է:

Ա.

Ա > օ. սովորաբար նախաշեշտ վանկերում. օրինակ՝ ալօս > օնգօս, աման > օմօն, ամաչիլ > օմընչէլլ, ամիս > օմալս, ամուր > օմօուր, անուն > օնօն, աշխարհ > օշխուր, փոսոս > օփօսօս, բանալի > պօնլանք, բամբակ > պօմբուկ, բարակ > պօրօկ, ընտանի (աղգական) > ընդօնա, ծաղիկ > օնդադ, մարագ > մօրուք:

Ա > օու (երկբարբառ). միշտ շեշտի տակ, բաց վանկում, երբեմն նաև փակ վանկում, օրինակ՝

¹ Տեխնիկական պատճառներով ամեն դեպքում այդ չենք նշում:

ակռա < ագոնու, ամպ > օումբ, իղա > իղօու, հիմա > համօու,
 երթամ < հալ ուրթօում, ուրբաթ > ըրպօուտ, տղա > ղղօու,
 փեսա > փիսօու, քացախ > քացօուխ, քսան > քսօուն:

Բառամիջում.

> ի. բաժին > պիժայն, կաշի > գիշն.
 > ա. խաղ > խաղք, կոճակ > գուժգազ.
 > ն. ծափ > գնփ, կանաչ > գաննչ, ճանճ > ջննջ.
 > է. համբանք > համբրէնք:

Ա > ու. շեշտի տակ բառասկզբին կամ բառամիջում բաղաձայնից
 առաջ. ալդ ու-ն երկար է արտասանվում. որինակ՝ աղ > ուղ,
 աղբ > ուխի, ապրանք > արբունք, առաստաղ > առըսղուղ, աս-
 տառ > աստուռ, ամի > ուփ, բակլա > պագլու, բամբակ > պմմ-
 բուկ, բակ > պուգ, բարձ > պուռց, դանակ > տանուգ, դատարկ >
 տարտուգ, գաստառակ > տաստուռ, դժուար > տիճուր, դմակ >
 < տմմուգ, երկաթ > ըրգութ, երկան > ըրգունք, գաւակ > գն-
 վուգ, թագ > թուղ, թաց > թուց, թիակ > թիլուգ, թաս > տուս,
 ժամանակ > ժամանուգ, լաց > լուց, ծառ > գուռ, ծառաւ > գա-
 ուով, կաթ(իլ) > գութ, կալ > գուլ, կապ > գուբ, կաքաւ > գա-
 քուվ, կտաւ > գըղուվ, կրակ > գըրուգ, հազ > հուգ, համար > հն-
 մուր, հատիկ > հուգ, հաց > հուց, հաւ > հուվ, ձագ > ծուկ, ճա-
 կատ > ղագուգ, մաղ > մուղ, մանգաղ > մանգուղ, մարդ > մուռտ,
 մատ > մուդ, մեսակ > մինուգ, շաքաթ > շապուտ, պաղ > բուղ,
 պատճառ > բաղշուռ, պարտք > բուրդք, պորտ > բուռդ, վատ >
 > վուգ, վարդ > վուրտ, վարձ > վուրց, տասն > դուսա, ցավ >
 > ցուվ, փեթակ > փիթուգ, փորձանք > փորցունք, քաղաք >
 քագուք, քախցր > քուխցր, քար > քուր, քուռակ > քուռուգ,
 օտար > ուղուր:

Ա > է ու. սովորաբար ռնգալիճնեբրից առաջ. օրինակ՝
 բան > պէնն, թան > թէնն, նշան > նիշէնն, հիվանդ > հի-
 վէննդ, չար > չէնր, պարան > բարէնն:

Ա > օ. բարձր > պօնցր:

Ա>ռ. բերան>պիրուն, մանր>մունդր, ծանր>դունդուն, մլար>
>մլոր, սանր>սունդր:
Ա>ալ. կաթ>զալթ:

Ե

Ե>էլ. սովորաբար շեշտի տակ, իսկ ռնգալիներից հետո՝ ըէլ.
հագնել>հաքնըէլլ, ածիւել>ազիլէլլ, աղել>աղէլլ, երես>
>իրէլս, աւել>ավէլլ, բարե>պարէլլ, բռնեմ>պրռնըէլմ, գի-
շեր>կիշէլր, երես>իրէլս, կճեպ>խիշէլր, կշեռք>գիշէլռք,
հետ>հէլտ, ձեզ>ծէլզ, վեր>իվէլր, տերե>դէրէլլ, ցերեկ>
>ցիրէլգ, ցորեն>ցիրէլն:

>ի. անխելք>անխիլք, անձրե>անձրիվ, կարծե>գիծի:

Ե>ի. սովորաբար նախաշեշտ վանկում և միավանկ բառերում.
գետին>կիղայնք, դեղին>տիղայն, թեթե>թիթէլլ, լեզու>
>լիզու, լեռ (լեռո)>լիռ, խելք>խիլք, խե>խիվ, խելօք>
>խիլանա, հերիք>հիրանք, հերու>հիրա, հրեշտակ>հրիշդուգ,
ձմեռն>ծմըիռ, ճեղք>ջիխք, ջիլքէլր, մեծ մի՛նձ, մեղու>
>միղանու, մեղք>միխք, մեղր>միղր, մենակ>մի՛նուգ, հե-
տե>հիդդէլն, նեղ>նիդ, ներկ>նիրգ, սիսեռ>սիսըիռ, տեղ>
>դիդ, փեթակ>փիթուգ, փեսա>փիսօու:

Ե>ըէ. քիչ բառերում. օրինակ՝
բոլն>պալն, պունըէր, շերեփ>շըրըէփ:

Ե>ը. բառասկզբին. օրինակ՝
եզր>ըզդի՛րան, երեք>ըրք, երկաթ>ըրգաթ, երկայն>ըրգան,
երկանք>ըրգունք, երկինք>ըրգանք, երկիր>ըրգալր:

Ե>ի. բառասկզբին, եթե հաջորդ վանկումն էլ «ե» կա. օրինակ՝
երեկո>իրգանու, երես>իրէլս, եփել>իփէլլ:
«Երբ» բառը լինում է «իփ»:

Ե>ա. եղջիւր>աղճալր, եղբայր>անպար:
Երբամ լինում է ուրթօում, եթ>լութա, հեշտ>հէիշտ, սե>
>սըիվ:

Ե>ըի. օրինակ՝ գետ>կըիդ, թեւ>թըիլ, թե>թըիվ, թեփ>
թըիփ:

Ի>ա, ան. բառավերջում շեշտի տակ. օրինակ՝ ագի>ակիա, ընտանի>
>ընդանա (ազգական). աղաւնի>աղվըննա, ալգի>ըկկա, անա-
լի>անլան, մօրի<մուրա, գիւղացի>կիղիցա, գինի>կինան,
հարամի>հարամա, լեղի>լիղան, եկեղեցի>գիղիցան, մատա-
նի>մանդնա, մաքի>մանքա, ոսկի>ըսկա, ուռենի>հօրինա,
շորի>ճիրան, փոշի>փուշա, տարի>դանն:

Ի>ալ, ան. սովորաբար բառամիջում, շեշտի տակ, փակ վանկում.
բանալի>պանանք, գին>կալն, դեղին>տիղալն, դրացի>
>տրացալն, լահուդի>լահուդալ (եբրայեցի), երկինք>ըր-
գալնք, երկիր>ըրգալր, ինքն>ալնք, կարիճ>գըղրալջ, ծիծ>
>ձանձ, կաղին>գաղալն, հին>հալն, հինգ>հանգ, ձի>ծան,
միս>մալս, միտք>մանտք, մոխիր>մախխալր, ոշիլ>իճալլ,
պանիր>բանալր, պատիժ>բաղալճ, սերգեիլ>սըրգիվալլ,
փիղ>վանլղ, ցից>ցալց, քրտինք>քըրդալնք:

Ի>էլ. գիրկ>կէլրգ. մլուս բոլոր գիրքերում միշտ «ի»:

Ո

Ո>ան, սովորաբար շեշտի տակ. ախոռ>լախանուռ, խաղող>խա-
ղանուղ:

Ո>օռ. կող>գօռղ, կով>գօռվ, հող>խօռղ, մոմ>մօռմ, շող>
>շօռղ, ով>օռվ, չորք>չօռք, փշոտ>փըշօռղ:

Ո<օռ, էռ. աղտոտ>աղղօռղ, ամսոս>ամսօռս, լակոտ>լա-
գօռնտ, խնոցի>խննօռց, խոզ<խօռզ, խոշոր>խուշօռր,
խոտ>խէռղ, խոփ<խէռփ, սխտոր>սխղէռր, մազոս>մա-
ղօռնտ, շնորհք>շընօռք, որսորդ>լարսօռղ, չոր>չօռր,
պղտոր>բըղղօռր, ջրհոր>ճըրհօռր, սոխ>սօռնխ (սէռնխ),
վարոց>վարօռց, փող>փօռղ (փէռղ):

Ո>ու, ու. շեշտի տակ և շեշտընթեր վանկում.
գործ>կուրճ, հով>հուվ, ժողովել>ժուղվէլլ, խնձոր>խըն-
ձոր, խոշոր>խուշօռր, ծոց>ձոց, կոճակ>գուժգակ, հո-
ղոտ>խուղոռղ, հորթ>հուրթ, հատ>հոռղ, հոտել>հուղղէլլ,
նոր>նոր, ողորմի>ուղըրմա, ոսպ>ուսպ, պորտ>բուռղ,
կառք>գըղգուր (փող), փոշի>փուշա, խոր>խուրա, փոր-
ձանք>փուրցունք:

Ո>ռ. վռ (ւ-ից հետո). աղւոր>աղռր, ցաւոտ>ցավռռ, բախ-
տաւոր>բախտաւռր, մեղաւոր>մեղաւռր:

Ո>ը. ոսկի>ըկսա, ոսկոր>ըսկէռռ.

Ո>ի. թռնիր>թինալր, ցորեն>ցիրէլն, կոխել>գիխէլլ, ոջիլ>իճալլ:

Ո>վը. ոտն>վըդ, որդ>վըրտ, որց>վըրծ:

Ո>լա. որս>լարսէլ, որսալ>լարսէլլ, որսորդ>լարսծռռ:

Օ

Օ>ու. մօրի>մուրա, արօր>հարուր, օտար>ուդուր, օր>ուր.
օրէնք>ուրալնք, ալսօր>խսուր:

Օ>ի. նօսր>նիսուր:

ՈԻ

ՈԻ>անու կամ անն. սովորաբար շեշտի տակ. ամուր>անանուր,
անուն>աննուն, արմունկ>ըրմանուգ, բուրդ>պանուրթ, գառ-
նուկ>կանանուք, գլուխ>ղըլանուխ, դղում>տըտանում, դուռ>
տանուռ, դուրս>ի տանուքա, իրիկուն>իրիգանն, երեսուն>լառ-
սանուն, եղունգ>ղանունգ, եղնգունք>ըղընգանունք, թութ>թան-
ութ, թուղթ>թաննիլթ, թուշ>թանուշ, թուք>թանուք, լու>
>լանու, լուծ>լանուծ, մութ>մանութ, խուլ>խանուլ, խունկ>խան-
ունկ, մօրուք>մօրանուք, լուրջ>լանուրջ, սկեսուր>սգիսանռր,
կուժ>գանուժ, կշտուկ>գըշղանուգ, կուրծք>գանուրցք, կրունկ>
>գրանունք, հում>հանում, ձմերուկ>ծմէրանուգ, մեղու>մեղանու
մուխ>մանուխ, մուկն>մանուգ, նուռն>նանուռ, ուլ>անուլ,
ուղտ>անուղտ, ուս>աննս, պտուղ>բըղանուղ, սնդուկ>սըն-
դանուգ, քուն>քանուն, վաթսուն>վաթժանուն:

ՈԻ>էռ. աշուն>աշէռն, դու>տէռն, դուք>տէռնք, հիսուն>հի-
սէռն, շուն>շէռն, ջուր>ճէռր, սուտ>սէռնգ (ըզդէլը—
ստեիր), սուր>սէռր, տուն>դէռն, փուշ>փէռշ:

ՈԻ>ա. միշտ բաց վանկում. կատու>գաղա, կծու>գըձձա, հե-
րու>հիրա, հեռու>հըռա, թթու>թըթթա:

Բացառութիւններ՝ շուտ>ուշէլդ, ութ>ալտտա, ուղարկել>ղըրգէլլ:

բ. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

Գրաբարի երկբարբառներն Արամոյի բարբառում անդրադարձած են հետևյալ կերպ:

ԻԻ > ալ. ալիւր > իլալը, ձիւն > ծալն, եղջիւր > աղճալը, արիւն > զիրալն.

> ի. գիւղ > կիղ, իւղ > իղ.

> ան. իւր > անր.

> ու. հիւսեւ > հուսսէլլ:

ՈՅ > ալ. բոլն > պալն, լոլս > լալս.

> ա. զոլգ > զակ, պատրոլգ > բադրակ:

> ուալ. թոլլ > թուալլ, կոլր > ագուալր, կոլթ > կուալթ, քոլր >

> քուալր:

Հավկիթ > հավգուայթ ձեւ ցույց է տալիս, որ հայերեն «կիթ» արմատը եղել է կոլթ, որից առաջացել են կիթ և կութ արմատները:

ԱՅ > ան. ալծ > անձ, գալլ > կ'անլ, երկալն > ըրգան, լալն > լան,

ձալն > ծան, մալր > մանր, փալտ > փադ:

դ. ԱՐԱՄՈՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՂԱՋԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արամոյի բարբառում, ինչպես նշվել է, բաղաձայնական համակարգը պատկանում է տեղաշարժ-տեղափոխության խմբին, հետևաբար Արամոյի բարբառը հնդեվրոպական ձայնեղները պահպանել է, գրաբարի համեմատությամբ խուլերն արտասանում է ձայնեղ: Հնդեվրոպական շնչեղ ձայնեղները Արամոյի բարբառը ենթարկում է տեղաշարժի՝ դարձնելով շնչեղազուրկ խուլ, դա նշանակում է, որ, գրաբարի համեմատությամբ, ձայնեղ հնչյուններն արտասանում է խուլ:

Գրբ. Արամ. բրբ.

Գրբ. Արամոյի բրբ.

բ > պ

պ > բ

դ > տ

տ > դ

գ > կ

կ > գ

ձ > ծ

ծ > ձ

շ > ճ

ճ > շ

Օրինակներ՝

բ > պ

Բակլա > պազլօու, պազլոն, բամբակ > պանբուգ, բան > պէնն,

քանակի>պանինք, բակ>պուզ, բաժանել>պըժնէյլ, բաժին>պի-
ժան, բառնալ>պառնէյլ, բարակ>պարուզ, բարե>պարէյլ, բարի>
պարուզ, բարձ>պուռց, բարձր>պօնցր, բեռն>պիռ, բերան>պի-
րուն, բերել>պիրէյլ, բորիկ>պուգանգ (գրք. բոկիկ), բոյն>պախն,
բուրդ>պատուրթ, բռնել>պըռնէյլ, բրդել>պըրտէյլ, աղբիւր>ախ-
պալր:

Այս օրէնքից դուրս են մնում բախտ և բախտանկութիւն, բըխէյլ,
փաղ (բաղ) բառերը, որոնք գրական փոխառութիւններ են:

պ>բ

Պակաս>բագուս, պակասել>բագսէյլ, պահել>բէհէյլ, պաղ>
>բուղ, պանիր>բանալը, պապ>բանաս, պառավ>բառուզ, պա-
ռավել>բառվէյլ, պատ>բուղ, պատուել>բաղոէյլ, պատիժ>բաղախն,
պատճառ>բաղջուռ, պատինջան>բաղինջուն, պատրուզ>բաղ-
րակ, պարան>բարէուն, պարտք>բուրդք, պետք>բիդք, պղտոր
>բըղդօնը, պորտ>բուռզ, պսակ>բըսուզ, պտուղ>բըղանուղ:

գ>կ

Գալ>ուկէյլ, գալլ>կանլ, գանգատվել>կանգդէյլ, գառն>կառ-
նանք, գարի>կարա, գարուն>կարաունք, գիւղ>կիղ, գիւղացի>
>կիղացա, գետ>կըյտ, գետին>կիղայնք, գերեզման>կէրէզմօն
գզել>կըզզէյլ, գին>կախն, գինի>կինա, գիշեր>կիշէյլ, գիտենալ>
>կուղէյլ, գիրկ>կէլրգ, գլուխ>ղըլանուխ, գնել>կընէյլ, գողա-
նալ>կանդէյլ, գործ>կուրձ, գործել>կուրձէյլ, գորտ>կանուռ, գըր-
կել>կըրգէյլ, գրպան>կրապօնն:

կ>գ

Կալ>գուլ, կախել>գախէյլ, կակուղ>գագանուղ, կաղին>
>գաղախն, կանաչ>գանանչ, կանչել>գինչէյլ, կապել>գաբէյլ, կա-
տու>գադա, կաշի>գիշա, կապ>գանք, կարգալ>գարտէյլ, կարել>
>գարէյլ, կարենալ>գանրէյլ, կաթ>գալթ, կաթ(իւ)>գուլթ, կաթել>
>գաթէյլ, կարկատան>գարգաղէուն, կարկուտ>գարգանուղ, կարճ>
>գարը, կարմիր>գարմանը, կաքավ>գաքուզ, կէս>գիս, սկեսուր>
>գգիսանուր, սկեսրալը>գգէսրար, կնիկ>գնալգ, կծու>գըձձա, կը-
շէք>գիշէլք, կշտանալ>գիշտանէյլ, կոխել>գիխէյլ, կող>գօուղ,
կոճակ>գուժգագ, կոյլ>անդուալը, կով>գուվ, կտրել>գըղբէյլ,
կուժ>գանուժ, կուշտ>գըշտանուզ, կուրանալ>գուռնէյլ, կործք>գան-
ուրցք, կտաւ>գըղուվ, կրակ>գըրուզ, կրունկ>գրանունգ:

Բացառութիւն են կազմում կնեպ բառը և նրանից կազմված
կնեպի բառը, որոնք լինում են Վիւրջէյլ և Վիւրջիբէյլ:

դ>տ

Դանակ>տանուգ, դիւր>(դոյր)>տուանյր (դաշտ, հարթ տա-
րածութիւն), դաստառակ>դաստառուգ, դատարկ>տարդուգ, գդում>
>տըտանում, դեղին>տիղալն, դեղնել>տիղնէլ, դեղնուց>տըղնա-
ուց, դէմ>տիմուցիս, դժվար>տիճուր, դմակ>տըմմուգ, դնել>տը-
նէլ, դու>տէն, դուռն>տանուռ, դուրս>ի տանութա, դուք>տէնէք,
դրացի>տրացալն:

տ>դ

Տալ>ուղէլ, տանել>դանէլ, տանիք>դինիր, տասն>դուստ,
տարի>դարն, տեղ>դիղ, տեսնել>դըսնըլ, տերե>դէրէլ, տէր>
>դիր, տիկ>դագ, տղա>դըղուռ, տնկել>դընգէլ, տուն>դէն:

ն>ծ

Ձագ>ծուկ (թռչուն), ձայն>ծան, ձեռք>ծառ, ձեր>ծըր,
ձէթ>ծիթ, ձի>ծան, ձիւն>ծայն, ձմեռ>ծմիռ, ձուկ>ծանուգ,
ձմերուկ>ձըմիրանուգ:

ծ>ն>գ

«Ծ» հնչյունը Արամոյի բարբառում նախ ձայնիկ է ֆուսգէլ (ն),
ապա կորցնելով պալթական մասը՝ վերածվել «գ» սուլականի: Այն
դեպքում, երբ բառի մեջ կա երկու «ծ», այս հնչյունը սովորաբար
վերածվում է «ն» հնչյունի և չի կորցնում իր պալթական մասը:

Օրինակներ՝

ծ>գ

Ծալել>գալլէլ, ծախել>գախէլ, ծաղիկ>գանդագ, ծաղիկ>
>գաղգէլ, ծամել>գամմէլ, ծայր>գարք (ծայրք>գալրք>գարք),
ծանր>գոնդոնր, ծառ>գուռ, ծարավ>գոռուլ, ծարավել>գարվը-
նէլ, ծափ>գանփ, ծափ տալ>գանփէլ, ծեփել>դիփէլ, ծնել>գը-
նանէլ, ծունկ>գանուկ, ծուռ>գաուռ, ծով>գուվ, ծիր(գիծ)>ըզզիր,
ծեծ>ըըզվառ, ծեծվել (կովել)>ըըզլէլ, խածնել>խաղնէլ, անի-
ծել>անիզէլ:

ծ>ն

Ծիծ>նայն, ծիծեռնակ>նիճըննուկ, ծծել>նընէլ, ծոց>նուց:
Միածան բառի դիմաց բարբառում կա ծիրանա կուղեգ՝ որ
նշանակում է ծիրանի գույնի գեղեցիկ արտահայտությունը, ծիծա-

ղել բառը դարձել է զաղղեյլ, որ, հրեի, առաջացել է ծաղ, ծաղբ-
արմատից:

Մածկել բառը դարձել է նախ զագգէյլ, ապա ռեգրեսիւլ ասի-
միլլացիալի ճանապարհով դարձել է զաղղեյլ, այդ բառի արմա-
տից էլ կազմվել է զաղգա՛նւզ-խուփ բառը, որը ծածուկ, այսին-
քըն՝ ծածկող ձևից է:

Չ>Ճ

Ջրադսց>ճաղուսք, ջրրի>ճիրա, ջուր>ճէռ, ջրեւ>իճրէյլ,
ջրհօր>ճըրհօռ, ջրյորդան>ճուրթօնն:

Ճ>Ղ

Ճակատ>ջագուդ, ճանապարհ>ջանփուք, ճանկել>ջանգրո-
դէյլ, ճանճ>ջանջ, ճեղք>ջիխք, ճեղքել>ջըխքէյլ, ճիւղ>ջանուղ,
ճրագու>ջրաքա՛(ու), ճրագ>ջըրուք:

դ. ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ԲԱՌԱՄԻՋՈՒՄ

Սովորաբար բառամիջում բաղաձայնները ենթարկվում են
նույն օրենքներին, ինչ որ բառասկզբին. օրինակ՝

Ունքերը=գուպէլրքա (կոպերքը), առաջ>առունճ, առաջին>
>առճալն, մէջ>միճա, եղջիւր>ախճալր, որոճալ>ըրջէյլ, կտրիճ>
>գըրալջ, ճակատ>ջագուդ, հոգի>հիկկա, այգի>ըկկա, օղակ>ու-
ղագ, գործ>կուրճ, գորտ>կանուդ, լուծ>լանճ, կծու>գըճճա և այլն:

Այստեղ նկատում ենք, որ ձայնեղները վերածվում են խու-
լերի, իսկ խուլները՝ ձայնեղների: «Ծ» հնչյունը բառամիջում ևս
վերածվում է «զ» հնչյունի (ծ>ճ>զ), շատ քիչ դեպքերում ար-
տասանվում է «ձ». օրինակ՝ ածիւել>ազիւէյլ, անիծել>անիզէյլ,
մեծանալ>մըզնէյլ, անէծք>անիսք [«զ» հնչյունը խլացել է հա-
ջորդ ք-ի (խուլ շնչեղի) պատճառով]. ածել>աճճէյլ, այծ>աձ: Ռըն-
գալիսից հետո, սակայն, ձայնեղները մնում են ձայնեղ, իսկ խու-
լերը ձայնեղանում. օրինակ՝ ականջ>ադանջ, երինջ>իրալնջ, ե-
ղունգ>ղանունգ, խնձոր>խընձուր, մանգաղ>մանգուդ, մեծ>միճնձ,
Երբ աֆրիկատը նախորդում է բաղաձայնին, հաճախ վերածվում է
շչականի կամ սուլականի. օրինակ՝ աղջիկ>աշչկան, կոճակ>գուժ-
դագ, անցնել>աննէյլ, իջնել>իշնէյլ, մէջք>միշկ:

«Բ» հնչյունից հետո և մի քանի այլ դեպքերում «թ» հնչյունը
արտասանվում է մաքուր խուլ. օրինակ՝ որդ>վըրտ, տմարդի>
>տմրտա, այտատ>ութ(ը), ըրպօւտ>ուրբաթ: Նշանակում է՝
«ը»-ից հետո ևս «դ» հնչյունը խլանում է և դառնում «տ»:

«Ժ» հնչյունը երկու բառում արտասանվում է «ճ»։ դժուար>տի-
նոր, պատիժ>բաղալճ (պատիճ) է արտասանում նաև Ուրմիայի
քարբառը)։

Եթե բառն սկսվում է երկու բաղաձայնով, ապա «ը» հնչյունը
գրվում է կամ նրանց միջև, կամ նրանցից առաջ իբրև աճական.
«օրինակ» չրկակ>ըչկակ (չկա), ըչկակ. ֆնալ>ըֆնէլ։

«Շուտ» բառի վրա ավելանում է «ու»։ ուշէլլ>շուտ։ Այդ «ու»
աճականն ավելանում է նաև միավանկ բայերի վրա. ուկէլլ>գալ,
ուդէլլ>տալ, ուլէլլ>լալ։

«Մ» հնչյունը հաճախ խանգարում է խուլ հնչյունին ձայնեղա-
նալու. օրինակ՝ նստել>նրստէլլ։

Մանր, ծանր, սանր բառերը լինում են մոնղոլ, գոնղոլ, աս-
նոնղոլ, այսինքն՝ «ա» հնչյունը շեշտի տակ, համաձայն օրեն-
քի, վերածվում է «ու»-ի, ապա պրոգրեսիվ ասիմիլացիայի
հետևանքով առաջացնում մի այլ «ու» հաջորդող երկու բաղաձայն
(գր) միջև։

«Ձ» հնչյունը վերածում է «ց» հնչյունի «ը»-ից հետո. օրինակ,
պուրց>բարձ, պոնցր>բարձր, պարցըննէլլ>բարձրանալ։ «Հ» հըն-
չյունը միայն հողոց բառում վերածվում է «խ»-ի (խծուղ>հող, խու-
ղուղ>հողոտ)։ «Մտնել» բառի մեջ լինում է «տ»-ի ասիմիլացիա.
մըննէլլ։

Ե. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Արամոյի բարբառում հաճախ է պատահում, որ բաղաձայնը
կրկնվում է. կրկնությունների լինում են հաճախ երկու ձայնավոր-
ների միջև. օրինակներ՝

Աձձէլլ, աղվըննա, ըմմէնքա, ալլա (անալի), ասսէլլ, գիլ-
լաս, տըխխէլլ, պարծըննէլլ (բարձրանալ), կըզզէլլ (գզել), թըթ-
թանու, թըռռէլլ, լըսսէլլ, զըքքան (խանութ), խուզզոնն (խողան),
զալլէլլ (ծալել), զամմէլլ (ծամել), գըձձա (կծու), պատէլլ, հազզէլլ,
հալլէլլ, հասզըննէլլ, հըռռա (հեռու), հիվըննէլլ, հըննանէլլ, հուս-
սէլլ (հյուսել), հուկզէլլ (հոտել), մաձձանն (մաժու), մազզոնն
(մազոտ), մըլլլլ (մլար), թըմմէլլ (մաշվել), հիդդէլլ (հետել),
փըլլէլլ (փլել), ալլա>(ազի), հըկկա (հոգի), փըռռէլլ, ըկկա (ալգի),
ըզզիր>(եզր)։

ՆԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ յ ա կ ա Մ

ա. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արամույի բարբառի գոյականի հոգնակները կազմվում են հետևյալ մասնիկներով՝

էլը-ըէլը (եբ), դա(տի), վէլը (վեր), անք (ունք կամ ոնք), դէնն, դոուն (տան), սդէնն (ստան), անք(իք), վա(վի), նա(նի):

Հոգնակների օրինակներ՝

էյր

Գուլ>գալէլը, հուգ>հագըլէլը, հուց>հացըլէլը, հուվ>հավըլէլը, քինթ (աղջիկ)>քընթէլը, ան>ընթէլը, ուսող>ասողըլէլը, ուփ>>ափըլէլը, պուրց>պարցըլէլը, պալն>պոնէլը (բներ), կան>կոնէլը (գալեր), կուրծ>կուրծըլէլը, կանուդ>կոնդէլը (գորտ), գակ>գուկըլէլը (գույգ), թըիվ>թիվըլէլը, շառ>շըռէլը (ժառ), լան>լըվըլէլը, խիվ>խիվըլէլը, խնոգ>խուգէլը, գուք>գարէլը (կապ), ծուկ>>ծակըլէլը (ծագ), մուգ>մանգըլէլը, վըրտ>վորտէլը (որդ), անուդ>>ըդըլէլը, սուլ>սանլէլը, սըրրտ>սըրդէլը, հուակ>հասկէլը, սանուտ>>ըդըլէլը¹, վուրտ>վարտըլէլը, դան>ըդըլէլը (տիկ), քուր>քարէլը: Ինչպես երևում է, հոգնակի «էլը» մասնիկ ստանում են միավանկ գոյականները, ինչպես որ ընդունված է ժամանակակից հայերենում, սակայն կան միավանկ գոյականներ, որոնք ստանում են «անք» (ունք-ոնք) վերջավորութիւն. օրինակ.

անք

գանգ>զընգանք (ծնկունք), անմբ>անմբանք (ամպանք), կըիտ>կիտանք, թուդ>թադանք (թաղունք), լիւ>լիւանք, մուդ>մադանք (մատունք), բուդ>բադանք (պատունք), ճէնը>ճըրաունք (շրունք), սիրմ>սըրմանք (սերմունք):

վէլը, վա-վան

Երկու բառ ունենում են «վէլը» (վեր) վերջավորութիւն՝ դուդ>>գագըլէլը (հալեր) և լանւ>լընւլէլը (լծեր):

Մի շարք միավանկ բառեր ունեն «վա» կամ «վան» (միջին հայերենի «վի») վերջավորութիւն. օրինակ՝ ծան>ծընվան (ձալներ), իշ>ըշվա (էշեր):

¹ Երկու բաղաձայնից առաջ երևում է «ը», ըստ բարբառիս օրենքի, ապա ս-ն ձայնեղանում է հաջորդ պայթական ձայնեղի ազդեցութեամբ (սա>զդ):

«Ծառ» բառն ունենում է «նա» (միջին հայերենի «նի») վերջավորությունը:

«Նա» (նի) վերջավորություն ունեն զգալի թվով գոյականներ. օրինակ՝ ականջ>ագինջնա, ամռն-ամրննա, ամալս>ամրնա (ամիս), աշագիրտ>աշագիրտնա, անշուր>անշուրնա, առատուղ>առատղնա, պէրուն>պէրրնա, վրդնամուն>վրդնամրննա, տրտանում>տրտունա, բղալն>բղղննա, գաղա>գաղվրնա (կատվրնի), դրւսուխ>կիւրխնա, իրէլս>իրրննա, իրալն>էրինջնա, թինալր>թրնդրնա, խնծուր>խնծուրնա, մանգուղ>մանգղրնա, բառուվ>բառրվնա, լախառու>լախուռնա: Որոշլալ առման դեպքում բոլորն ունենում են «ալն» վերջավորություն՝

դա-նդա, դաք (միջին հայերենի «տի»-«նտի», «տիք»):

Արցառնք>արցրնքա, կիղ>կիղանդա (գլուղեր), հէձէռն>հիզրնդա (հեծաններ), քուռուղ>քուռղդա, գալուղ>գալնղդա, անպան (եղբայր) բառը լինում է անպարդանք (անպարտիք), «քուսլը» (քոյր) բառը լինում է քուրվրդանք (քուրվրտիք), լիզան>լիզվրդան: «Ընդէլը» (ընկեր) բառը լինում է ընգրրդաք (ընկերտիք):

դէ'ռն || դոնն («տանն»)

Հսկէռն>ըսկրդոն (ոսկորտան), իճալ>իճրդէռն (ոջիւտան), ախճալ (եղջիւր)>ախճրդոն:

ա'ք (իք)

«Ի» վերջավորություն ունեցող մի շարք գոյականներ ստանում են միայն «ք».

Մանքան (մաքի)>մանքանք, ըսկա (ոսկի)>ըսկանք, աղվրնա, (աղանի)>աղվրնաք, ընդանա (ընտանի)>ընդանանք, կիղիցա (գիւղացի)>կիղիցաք, գիղիցան (եկեղեցի)>գիղիցանք, հօրինա (ուռենի)>հօրինաք: Դրանց նմանողութամբ նաև՝ անգուղալն (անկողին)>ընգուղանք>ընգուղանալն. ընգուանլղ (ընկոյղ)>ընգուղանք>ըկկա (ալգի)>ըկկանք, գղոն (տղա)>գղաք:

ստոռն || ստէ'ռն (ստան)

Մի շարք գոյականներ, որոնք ունեն ձայնավոր վերջավորություն, ստանում են «ստան» մասնիկ.

Ակկա (ագի)>անկրստէռն, մուրան (մօրի)>մուրրստէռն, գիշա (կաշի)>գըշրստէռն, ճիրա (ջորի)>ճիրրստոն, ճաղուսք>ճաղրստոն:

ՆԷՆՐ (ՆԵՐ)

«Նէյր» վերջավորութեամբ համեմատաբար քիչ բառեր կան. աղալար (աղբիւր) > ախպըրնէյր, կառնաուգ (գառնուկ) > կառնըգ-նէյր, քթնց > քըթուցնէյր:

ԱՔ (ԻՔ)

Աք (իք) վերջավորութեամբ նույնպէս քիչ բառեր կան. մուրա > > (մարդ) > մարդաք, նաուու > նըռնաք, իկկա > ըկկաք (այգիներ):

Արմուկն բառն անենում է «ուք», իսկ եղունգ բառը՝ «ունք» վերջավորութեամբ. ըրմաունգ > ըրմընգաունք, դաունգ > ըղընգաունք:

Կան մի շարք գոյականներ, որոնք հոգնակին կազմում են մի քանի տեսակ. օրինակ՝

անգուս > անգուսնա > անգուսդա (ակօս), ագոօու > ագոաք > ագ-որստէռն, վըդ > վըդդա > վըդքա > վըդնա (ոտն), գաղալն > գաղնա > գաղնաք:

«Կող» բառն ունենում է «էրք» վերջավորութեամբ. գօուղ > > գուղէրք:

Բ. ՀՈՂՈՎՈՒՄ

Արամոյի բարբառը ինքստ պարզացրել է հոլովումը: Փաստո-րեն վերացել են տրական և գործիական հոլովները, ներգոյականն էլ գոյութեան չունի, մնում են միայն սեռականն ու բացառականը, որոնք այն աստիճանի թույլ են արտահայտված, որ կարելի է նրանց համարել վերացման պրոցես ապրող հոլովներ: «Ի» հոլովման են-թարկվող բոլոր բառերը սեռականում ունենում են «այն» վերջավո-րութեամբ, որ սովորական «ին» ձևն է (իսկ վանկում «ի» ձայնա-վորն արտասանվում է «ալ»): Բացառականը կազմվում է սեռակա-նից՝ վրան ալիւլացնելով «ըմնէյ» մասնիկը: Այդ մասնիկն առաջա-ցել է գրաբարի տրականի «ում(ն)» վերջավորութեանից, որի վրա, ըստ նույն գրաբարի օրինքի, ալիւլանում է «էյ» երկբարբառը (զը-րաբ. «է») բացառական մասնիկ դառնալու համար (նիլ, ռիլ, սւմ, լումէ): Հետագայում այս «ումնէյ» > «ըմնէյ» ձևը տրոհվել է բացառա-կանից և դարձել բառ-մասնիկ, նմանվելով Շաղախի «անի», Դարա-դաղի «անէ», Հադրութի «անա», Մեղրու՝ «հէնից», Կարճեանի «հէ-նի» և այլ ձևերին:

Տրական, հայցական, գործիական և ներգոյական հոլովները փոխարինվել են նախդրավոր կազմութեամբ: Այսպէս՝ գործողու-թեան հանգման առարկան, կամ տեղը կամ միջոցը ցույց տալու

համար գործածվում է «ի» նախդիրը հայցական ձևի հետ. օրինակ, ի դէռն (դեպի տուն), ի տուսա ճէռը (թասով ջուր). բացառական հոլովը, ինչպես ասացինք, կազմվում է սեռականից՝ վրան ավելացնելով ըմնէլ ու(ն)մնէլ բառ-մասնիկը, որ համարյա դեռ վերջավորութիւնն է: Բայց դրա հետ միասին Արամոյի բարբառը բացառականի վրա պարտադիր կերպով դնում է «ի» նախդիրը, գրաբարի նման, վերածում «լ» հնչյունի ձայնավորով սկսվող բառերից առաջ, նույնպես գրաբարի նման. օրինակ՝

Լիս իլօւ ի դէռնմնէլ—ես ելա (դուրս եկա) տանից:

Տէռն առէլը յերմինէլս թաննիսթ—դու ինձնից գիրք առար:

Լիս առա ի քինէլ թաննիսթ—ես քեզնից գիրք առի (առա):

Յումումնէ՞ առէլը գհուցա—ումից ես առել հացը:

Կա «ի» նախդիրի գործածութեան մի ձև ևս, որ ցույց է տալիս նպատակ. օրինակ՝ Լիս վուղա բիդ արթօում ի պէռնա—ես վաղը պիտի գնամ (գնալու եմ) գործի:

Այսպիսով Արամոյի բարբառը պահպանել է գրաբարի «ի» նախդիրի գործածութեան բոլոր օրենքները:

Եզակի հայցական հոլովը ձևով նույնն է ուղղականի հետ, ինչպես գրաբարում, երբ գործածվում է անորոշ առումով, իսկ երբ գործածվում է որոշյալ առումով, ստանում է «զ» նախդիրը, ինչպես գրաբարում:

Օրինակ՝ Ֆիդէնի, հալ ուզէյն ըգրէյն զմըռ յիզանն, շինէյն

թաննիսթ: Ֆիդէնի, ուզում են մեր լեզուն գրեն շինեն գիրք:

Տէռն առէլը յերմինէլ թաննիսթ—դու ինձնից գիրք վերցրիր

«ի» հոլովման սեռականները լինում են «ա» վերջավորութեամբ, եթե անորոշ առումով են կամ կապին հետադաս են, և «այն» վերջավորութեամբ, եթե որոշյալ առումով են: Այդ վերջավորութիւնները օրինաչափ են, որովհետեւ, ըստ Արամոյի բարբառի հնչյունական օրենքների, բառավերջի բաց «ի»-ն արտասանվում է «ա» (քամա—քամի), իսկ փակ «ի»-ն արտասանվում է «այն», օրինակ՝ զպպայն թաննիսթ > զավակին գիրքը, հիդ ան զանվա գացօնք յաննոնց դաննա—իմ զավակի հետ գնացինք նրանց տունը:

Ինչպես ասացինք, բացառականը սեռականի վրա ավելացնում է «ըմնէլ»: Գործիքական հոլով ունենում են միայն իրի առման գոյականները: Գործիականը կազմվում է հայցականից՝ ի նախդիրով:

«Ի» հոլովում

Եզակի

Շապուտ (շաբաթ)	ամայս (ամիս)	լայս (լույս)
Ուղղ. շապուտ(ա)	ամայս(ա)	լայս(ա)
Սեռ. շապտայն (շապտա)	ամսայն	լուսայն (լուսա)
Տր. ի շապտա	լամայս	ի լայս
Հայց. զշապուտ(ա)	զամայս(ա)	զլայս(ա)
Բաց. ի շապտայն ըմնէլ	լամսայն ըմնէլ	ի լուսայն ըմնէլ
Գործ. ի շապուտ(ա)	լամայս(ա)	ի լայս(ա)

Հոգնակի

Ուղղ. շապլտնա(յն)	ամլտնա(յն)	լուսաութ, լսվա(յն)
Սեռ. շապլտնայն	ամլտնայն	լուսաութ, լսվայն
Տր. ի շապլտնա	լամլտնա	ի լուսաութ, ի լսվա
Հայց. զշապլտնա(յն)	զամլտնա(յն)	զլուսաութ, զլսվա(յն)
Բաց. ի շապլտնայն ըմնէլ	լամլտնայն ըմնէլ	ի լսաութ ըմնէլ, ի լրսվայն ըմնէլ
Գործ. ի շապլտնա(յն)	լամլտնա(յն)	ի լուսաութի, լսվա(յն)

«Շապլտնա» ձևը միջին հայերենի «շաբաթնի» ձևն է, «ամլտնա» > ամսնի, լուսաութ > լուսութ, լսվա > լուսվի:

«Ան» հոլովում

«Օ» հոլովում

Եզակի

Ուղղ. տանու (դուռն)	մանր (մայր)	անսպանր (եղբայր)
Սեռ. տրուն(ա) գիսա (դռան կեսը)	մուր(ա)	անսպուր(ա)
Տր. ի տանու(ա)	ի մուր(ա)	լանսպուր(ա)
Հայց. գտանու(ա)	զմանր(ա)	զանսպանր(ա)
Բաց. ի տրուն ըմնէլ	ի մուր ըմնէլ	զանսպուր ըմնէլ
Գործ. ի տանու(ա)		

Հոգնակի

Ուղ. տուվա(յն)	մուրվրդա(յն)	անխալըրդաք(ա)
Սեռ. տուվայն(գիսա)	մուրվրդայն զանվանգ- դայն (մալրերի զա- վակները)	անխալըրդուց
Տր. ի տըռվա(յն)	ի մուրվրդա(յն)	յանխալըրդաք(ա)
Հայց. զտուվայն	զմուրվրդայն	զանխալըրդաք(ա)
Բաց. ի տըռվայնումնի տանուք (դռններից դուրս)	մուրվրդայն ըմնէլ	յանխալըրդուց ըմնէլ
Գործ. ի տուվայն		

«Դուռ» բառի հոլովման մեջ սեռականը լինում է «դրան» — գրա-
բարի նման, սակայն ստանում է «ը» հոդը (տրունա գիսա — դռանը
կէսը): Հոգնակի հոլովվելիս «դուռ» բառի ձևերի տարբերություն-
ները կորչում են, և ամեն տեղ լինում է «տուվայն», բացի բացա-
ռական «ըմնէլ» ձևից. այստեղ այլևս հոլովական տարբերություն
չկա: Այդ լինում է հետևյալ պատճառով. «դուռն» բառը հոգնակի
լինում է դովի (միջին հայերենի «վի» հոգնակիով), որ այս բար-
բառով կլինի տուվա: Սակայն երբ հոդ է ստանում, «ի» ձայնավորն
ընկնում է փակ վանկի մեջ և կարող է արտասանվել «այ» (տըռ-
վին — տուվայն): Ուղղականի «ի» (տուվի) վերջավորությունը սեռա-
կանում ստանում է նոր իմաստ, վերցնելով իր վրա «դովի» ձևի
երկրորդ «ի» հոլովական (սեռական) նշանակությունը և դառնում
դովին > տուվին > տուվայն, որով և նմանվում է ուղղականին. դրա-
նով վերանում է տարբերությունը բոլոր հոլովաձևերի մեջ: Այլ-
պես և «մալր» բառի հոգնակին հոլովման ժամանակ. «Մուրվրդա»
ձևը նույն մօրվտի ձևն է (վտի — հոգնակի ածանցով, որ հայտնի է
իրևե միջին հայերենի հոգնակի ածանց), որ «ն» հոդ ստանալով
դառնում է «մուրվրդայն» և նմանվում սեռական և մյուս հոլովական
ձևերին: «Նղբալը» բառի հոգնակին ունի «անխալըրտիք» ձևը, որ Արա-
մոյի բարբառով կարտասանվի «անխալըրդաք», սակայն սեռականում
ունենում է «ոց» վերջավորություն և դառնում «անխալըրդուց»: Հո-
լովական բոլոր ձևերի մեջ «ու» ձայնավորը երկար է արտասան-
վում:

Արամոյի բարբառում «ոց» հոլովում չկա:

Ե զ ա կ ի

Քուայր

Ուղղ. քուայր
Սեռ. քուրա (դղան)
Տր. ի քուայրա
Հայց. դքուայրա
Բաց. ի քուրամնէլ

Գրնայգ

գրնայգ
գրնգուն (դղան)
ի գրնայգա
գգրնայգա
ի գրնգուն ըմնէլ

Ինչպես տեսնում ենք, «քուր» բառը ենթարկվում է «ի» հոլովման (քուր — քուրի), ուստի սեռականի արմատում ունենում է «ու» ուղղական՝ «ու > ուայ»-ի դիմաց (գրաբարի հնչյունափոխութիւնների օրինքով): Այդ նկատվում է նաև այլ բառերում, օրինակ՝ պայն (բոյն) > պունըլլը (բուներ), լայա (լոյս) > լուսաութ (լուսութ) և այլն: «Կնիկ» բառը ենթարկվում է «ան» հոլովման (կնգան > գրնգուն):

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. քուրվըդա(յն)	գաննաք (կանայք)
Սեռ. քուրվդայն (դղաք)	գաննուցա ըռահնա (կանանց շորերը)
Տր. ի քուրվըդա(յն)	ի գաննաք
Հայց. դքուրվըդայն	գգաննաք
Բաց. ի քուրվըդայն ըմնէլ	ի գաննուցաննէլ (մի մա իրըիգ) ¹

«Քուր» բառի հոգնակի ձևերի մեջ առաջացել է նույնութիւն վերը նշված պատճառներով. բառիս հոգնակին է «քուրվտի» միջին հայերեն ձևը: «Կին» բառի հոգնակին է «կանայք» գրաբար ձևը, որ տվել է բարբառի «գաննաք» պատկերը: Սեռականը լինում է «կանացի», որ բարբառում անդրադարձել է իբրև «գաննուցա»:

Դղօու (դղան) > տղա Կինա (կինայն) > գինի

Ե զ ա կ ի

Ուղղ. դղօու (որոշ. դղան)	կինա (որոշ. կինայն)
Սեռ. դղայն (մարմ)	կինայն
Տր. ի դղան	ի կինա(յն)
Հայց. գղղան	գկինայն
Բաց. ի դղայն ըմնէլ	ի կինայն ըմնէլ

¹ Կանանցից մեկը եկավ:

Երբ «տղա» բառը «ն» հոգն է ստանում, նրանում վերականգն-
 նըվում է լատավերջին գրաբարյան «յ»-ն, որից ստացվում է «տը-
 դայն» ձևը, որ բարբառում ունենում է «դղան» պատկերն՝ ըստ օրեն-
 քի. «գինի» բառի որոշյալ առման բոլոր ձևերը լինում են կ'ինայն:

Հոգնակի

Ուղղ. դղաք(ա)
 Սեռ. դղուցա (մուրվըդայն)
 Տր. ի դղաք(ա)
 Հայց. գղղաքա
 Բաց. ի դղուցամնէլ

Թվականոց

Միգլ, ըրգառք, իրէյք, չո՞ք (ուչո՞ք), հայնգլ (ուհայնգլ),
 վէյց, լութա, ալտա, ալնա, դո՞սա, գըսնումիգլ, գըսվըրգնու,
 գըսվիրէյք, գըսնըչո՞ք, գըսնուհայնգլ, գըսնուվէյց, գըսնըվալտոն,
 գըսնըվայնն, քսոն, քսոնումիգլ, քսոնվըրգնու, քսոնվի-
 ղէյր, քսոնուչո՞ք, քսոնուհայնգլ, քսոնուվէյց, քսոնուլութա,
 քսոնուվալտոն, քսոնուվայնն, լառսառն, քառսառն, հիսսա-
 ռն, վո՞ծծանն: Մնացած տասնավորները արաբերեն են: Հո՞րա՞յր,
 ըրգա հա՞րա՞յր, ըրք հա՞րա՞յր, չո՞ք հա՞րա՞յր և այլն. հնչուր:

Դերանուն

Արամոյի բարբառում անձնական դերանուններն են ըիս>ես,
 տէ՞ն>դու, ան>նա, մինք>մենք, տէ՞նք>դուք, անոնք>
 >նրանք: Անձնական «ան» դերանվան փոխարեն հաճախ կամ հա-
 վասարապես գործածվում է ըսսոն (սա) դերանունը, որ ցուցական
 է: Ինչպես գոյականներում, այնպես էլ դերանուններում բացակա-
 յում է գործիական հոլովը: Չկա նաև ներգոյական հոլովաձև:

Հոլովում

Ե զ ա կ ի

Ուղղ. ը՞ս	տէ՞ն	ան կամ ինոն(նա)
Սեռ. ան(ը) (դղան)	քու	անոն
Տր. ընձը՞	քիզ	»
Հայց. դալս	զքէլ	զան
Բաց. լըր մինիս	ի քինէլ	լըրմինա (լ'ուր զո՞ լըրմինա—վերցրու այն նրանից)

Սեռական ձևի «ա» հնչյունը բարբառիս օրինքով ծագում է «ի»-ից, այսպես է և հայցականի «զիս» գրաբարյան հայցական ձևը, որ բարբառիս օրինքով պետք է արտասանվեր զայս (տես՝ «ի» ձայնավորի փոփոխությունները)։ բացառականի «լըր մինիս» ձևը գրաբարյան իւրմէ՝ իւրմէնէ ձևից է, որ գործ է ածվում նաև երրորդ դեմքի համար՝ յըրմիճա. սակայն առաջին դեմքը երրորդից տարբերվելու համար ստանում է առաջին դեմքի «ս» դիմորոշ կամ ստացական հոդը։ Այսպիսով՝ ինձնից ձևը բարբառում բացակայում է։

Երկրորդ դեմքի դերանունն ուղղականում ունի «ն» որոշող հոդը, հայցականում՝ զքեյ ձևը, որ, երևի, «զքեզ» ձևից է, բացառականում՝ գրաբարյան ի քեմ ձևից առաջացած «ի քինէլ»։ Վերջին ձևի բառավերջի «էլ» երկբարբառը պահպանել է գրաբարի «է»-ի արտասանությունը։ Գրաբարյան այն ձևն ըստ բարբառի օրինքի տվել է «ան», «այնորիկ» ձևից ստացվել է «անճուր» (անոր) ձևը։ Ինչպես տեսնում ենք, հայցականը գործածվում է գրաբարյան «զ» նախդիրով, իսկ բացառականը միշտ «ի» նախդիրով։ «Յըր» ձևը գրաբարի «իւր» դերանվան ձևն է։

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	մինք՛	տէռք	անճունք
Սեռ.	մըր	ծըր	անճունց
Տր.	մըի	ծըի	»
Հայց.	զմըի	զծըի	զանճունք
Բաց.	ի մըիյնէլ	ի ծըիյնէլ	յանճունց ըմնէլ
	ի մըրնի	ի ծըրնի	

Հոգնակի հոլովման մեջ նկատելի է, որ երկրորդ դեմքի դերանուններում բացառականը կազմվում է թե՛ տրականից և թե՛ սեռականից։ Եզակի երրորդ դեմքի դերանվան բացառական ձևը կազմված է «ումնէ» վերջավորությունից, այսինքն, գրաբարյան տրականի «ում» վերջավորությունը (իւրում, մերում, ձերում և այլն)՝ ավելացրած «նէ» բացառական վերջավորությունը։ Այս «ումնէ» ձևը հետո ընդհանրացել է ամբողջ լեզվի մեջ և դարձել բացառական հոլովի ձև ընդհանրապես (նաև գոյականների համար)։

Այս, այդ դերանուններն ունեն ան, ըստ՝ու, ան, իդո՝ու տեսքը և հոլովվում են «ան» դերանվան նման։

Յուցական դերան ու ճ

Ե զ ա կ ի

ըսասօու,	իդօու,	ինօու	ան
ըսածնէր	իդծնէր,	ինծոնէր,	անծան
»	»	»	»
զըսածն	զիդծն	զինծն	զան, ուզուն
յաստուր ըմէլ,	յահծնէր ըմէլ	յանծնէր ըմէլ	յըրմինա
լըսածնէ,	լիդծն	լինծն	

Հ ո գ ն ա կ ի

ըստունք,	իդունք	ինունք	անունք
ըստունց,	իդունց,	ինունք	անունց
»	»	»	»
զըստունց,	զիդունց	զինունք	զանունց
յաստունց ըմէլէն	յիդունց ըմէլ	յինունց ըմէլ	յանունց ըմէլ
լըստունք,	լիդունք,	լինունք	լանունք

Ինչպես երևում է, Արամոյի բարբառում ցուցական դերանուններն ստացել են իսա, իդա, ինա ձևերը, որոնք առաջացել են հաա, հդա, հնա ձևերից: Արդէ՞ք այս վերջինները սա, դա, նա ձևերն են «է» ածականով, թե՞ առաջացել են այս սա, այդ դա, այն նա կրկնակի դերանվանական ձևերից, որոշելը դժվար է: Սեռական ձևերն ստանում են հսոր, հդոր, էնոր կերպարանքը, որ միջին հայերենում լինում են այսոր, այդոր, այնոր պատկերով: Դրանք, անկասկած, առաջացել են այսորիկ, այդորիկ, այնորիկ զրաբար ձևերից, որ այս, այդ, այն դերանունների կրկնակ ձևեր են և գործածվում են գոյականին հետադաս (տանս ախորիկ): Հոգնակի ձևերը հաստատում են ալդ, քանի որ ուղղականում ունեն ասոնք, ադոնք, անոնք ձևերը: Երրորդ դեմքի «անունք» ձևը և քացառականի յասունց ըմէլ (ասոնցումնէլ), յանունց ըմէլ (անոնցումնէլ) ձևերը հաստատում են ալդ: Գործիականները կազմված են «ի» նախդիրով և հայցականով, որ, ինչպես վերևում ասել ենք, զրաբարի «ի» նախդիրի գործածութիւններից մեկն է: Երրորդ դեմքն ունի նաև ան ձևը, որ «այն» դերանունն է:

Այստեղ, այդտեղ և այնտեղ դերանուններն ունեն հուսսու, հուզօու, հուցօու պատկերը: Նկատի առնելով Արամոյի բարբառի հնչյունական օրենքները, պետք է կարծել, որ դրանք հոսա, հո-

դա, հոնա կամ՝ յոսա, յոդա, յոնա ձևերն են, կան նաև՝ յագդէլդ, հուդէլդ = ալստեդ, ալլստեդ:

Այսպես, այդպես, այնպես դերանունների փոխարեն գործածվում է «հանց», միջին հայերենի՝ «հայնց» ձևը, որ առաջացել է «յայնց» ձևից: «Յայնց որ» ձևը տվել է «ընցը»:

Ընցը գիդծո՞ւ > յայնց որ դալդ = դրա նման.

» դանծո՞ւնք > յայնց որ դանոնք = նրանց նման.

» դան, դանծո՞ւնք — սրա նման, սրանց նման.

քան ըսսծո՞ւ — այսքան, քան իսս: —

«ինչպես» դերանունը լինում է «չուց»:

Այս, այդ դերանունները գոյականի հետ գործածվելիս՝ նրան են հաղորդում իրենց արմատական բաղաձայնը. օրինակ՝ Ասի քուսարէյս մինձ ի, անի քուսարա բզդագ ի = Այս քույրը մեծ է, ալն քույրը փոքր է:

Ըիս լան պաժոուկըս հայ խմէյմ ճանուր — այս բաժակով խմում եմ շուր:

Յան դանուզըս հայ գըդըէյմ զմայսա — այս դանակով կտրում եմ միսը:

Հարցական դերանուններ

Ուղդ. ծո՞ւվ հայ ուվոու (ո՞ւ է գալիս) չո՞ (խնչ)

Սեռ. ծո՞ւմ դղան իս

չվո՞ համուր (ինչի՞ համար)

Տր. լծո՞ւմ

ուրա՞ իրիյգ, ի չան իրիյգ (ինչի՞ կամ՝ ինչի՞ համար եկավ)

Հայց. գէո՞ւվ դիսիլը իս

զչան (խնչը)

Բաց. լումու՞նէ առէյր զհուցա

լիչվից իղուվ (ինչից եղավ)

Գործ.

ի չան հալ պանայս (ինչով ես բանում)

Գուդէյն ըգրէյն ըզմըռ լիզաուն, շինէյն զծանոխթ:

Յիմո՞ւ (ո՞ր) լիզան հայ գրուցտէյք (ո՞ր լիզվով եք խոսում)

Տէուն յո՞ու գէր իր — դուն ո՞ւր էիր:

սահմաններում՝ Քաբուսիեի բնակչությունը խոսում է Սվեդիայի
բարբառից մի տարբեր բարբառով: Առաջին տպավորությունից
երևում է, որ Քաբուսիեի բարբառը զգալի չափով ազդված է Սվե-
դիայի բարբառից, սակայն նրա հիմնական առանձնահատկությու-
ները, փոքրիկ բացառությամբ, չեն կապվում Սվեդիայի բարբառի
հետ: Քաբուսիեի բարբառի ներկան և պայմանական ապառնին
կազմվում են «գը» մասնիկով, որ Քաբուսիեի բարբառի հնչյունա-
կան օրենքով առաջացած պիտի լինի «կա» բառից. ուրեմն Քաբու-
սիեի բարբառը պատկանում է «կա» ճյուղին: Բայց նույն Քաբու-
սիեի բարբառի ներկայի և անցյալ անկատարի շարունակականները
կազմում են «գէռ» մասնիկով, որ «գու» մասնիկի քաբուսիական
արտահայտությունն է, իսկ «գու» մասնիկը առաջացել է կոյ>գոյ
բառից. հետևաբար Քաբուսիեի բարբառը, օգտագործելով «կա»
մասնիկը ընթացիկ կամ սովորական գործողություն ցույց տալու
համար, «կը» մասնիկը օգտագործում է շարունակական ցույց տա-
լու համար, որով բռնում է մի տեսակ միջին տեղը «կա» և «կը»
ճյուղերի բարբառների միջև: Բայց դրա հետ միասին Քաբուսիեի
բարբառը իր հնչյունական կազմությամբ, հատկապես իր ձայնա-
վորների հատկությամբ, զգալի նմանություն ունի Արամոյի բար-
բառին, այսինքն՝ «հա» ճյուղի բարբառին, ուրեմն՝ կարելի է ասել,
որ Քաբուսիեի բարբառը իր վրա կրում է երեք ճյուղի հետքեր:
Չնայած այդ բոլորին՝ Քաբուսիեի բարբառը խառնուրդ բարբառ
չէ, այլ ունի իր լեզվական կառուցվածքի ինքնուրույն սիստեմը,
ունի այնպիսի ինքնուրույն գծեր, որոնք Քաբուսիեի բարբառն
առանձնացնում են որպես անկախ սիստեմ:

Քաբուսիեի բարբառի մեջ էլ նկատում ենք գրաբար լեզվի

բազմաթիւ օրինքների վերապրումներ, հատկապես բայական կառուցվածքի մեջ նկատելի է այդ, հոլովման կառուցվածքի մեջ էլ գրաբարի հատկութուններից պահպանվել է հայցականի «զ» նախդիրի գործածությունը, գործիականի «ու» վերջավորությունը, որ առաջացած պիտի լինի «աւ» և «ով» ձևերից, և ձայնավորներով սկզբովոյ բառերից առաջ «ի» նախդիրը գործածելը՝ շարժում կամ ուղղություն ցույց տալու համար. օրինակ՝

Գէորթում յամբուր (գնում եմ ամբար): Գէորդնօում գթօուր (տեսնում եմ քարը), քարու գէու գարգոճլում իր (քարով էի խփում):

Սակայն Քարուսիկի բարբառն ունի մի կարևոր հատկություն, որը այդ բարբառը ճանաչելու և իբրև բարբառ ընդունելու հիմնական ելակետն է: Այդ ելակետը բարբառում բառամիջի ձայնավորի հնչյունափոխությունն է, որ կատարվում է ձևաբանական նպատակներով: Բարբառում չկա «ը» հոդը, ուստի առարկայի որոշ լինելու գաղափարը արտահայտում է ոչ թե բառավերջի «ը» հոդով, այլ բառի շեշտովոյ ձայնավորը ներսում վերափոխելու միջոցով. օրինակ-

Անորոշ

քուր (քար)
ճէր (ջուր)
տիկուլ (գգալ, գգալ)
քարիբ (քարեր)
դղաք (տղաներ)
դէնն (տուն)
մար (մալը)
ախպար (եղբայր)
գընադ (կին)
մուրտ (մարդ)
ձառ (ձեռք)
մարտաք (մարդիկ)
գրէլց (գրույց)
լալս (լոլս)
ձուր (ծառ)

Որոշյալ

ան քօուր (այս քարը)
ան ճալր (այս ջուրը)
ան տիկէնլ (այս գգալը)
ան քարէր (այս քարերը)
ան դղուք (այս տղաները)
ան դանն (այս տունը)
ան մուր (այս մալը)
ան ախպուար (այս եղբայրը)
ան գնաա (այս կինը)
ան մաուրտ (այս մարդը)
աս ծոււրա (այս ձեռքը)
ան մարտուք
ան գրալց (այս գրույցը)
ան լուճլս (այս լույսը)
ան ծօուռ (այս ծառը)

Հաճախ թեքման այս երևույթն արտահայտվում է արտասանության ըմայնացումից հրաժարվելու միջոցով. օրինակ՝

Անորոշ

պաննք (բանալի)
 իրգանք (երկինք)
 ձանգ (ծունկ)
 շաք (շուք)
 բնբն (պապ)

Որոշյալ

սոս պալանք (այս բանալին)
 սոս իրգանք (այս երկինքը)
 սոս ձանգ (այս ծունկը)
 սոս շաք (այս շուքը)
 իմ բարա (իմ պապը)

Այս երեւոյթը, որպէս հետեոյողական հատկութիւն, երեւան է գալիս նաեւ խոնարհման ժամանակ: Այսպէս, օրինակ, ներկայի սովորական խոնարհումը լինում է հետեւյալ կերպ.

գէու սուրվէմ — սովորում եմ	գէու գարտում — կարդում եմ
գէու սուրվէյս — սովորում ես	գէու գարտուս — կարդում ես
գէու սուրվի — սովորում է	գէու գարտու — կարդում է
և ալլն.	և ալլն.

Կամ՝

սուրվիցը — սովորեցի	գարտացը — կարդացի
սուրվիցուր — սովորեցիր	գարտացիր — կարդացիր
սուրվիցու — սովորեց	գարտուց — կարդաց
և ալլն.	և ալլն:

Սակայն, երբ կարիք է զգացվում արտահայտելու ուղիղ խնդիրը ցուցական «զը» դերանունով, այդ դեպքում խոնարհվող բալի շեշտված ձայնավորի մեջ մտցվում է արմատական փոփոխութիւն: Այդ նույն խոնարհումը կատարվում է հետեւյալ ձևով.

գէու սուրվայմ զը — ես ալն սովորում եմ
գէու սուրվայս զը — դու ալն սովորում ես
գէու սուրվուս զը — նա ալն սովորում է
և ալլն.

գէու գարտում զը — ես ալն կարդում եմ
գէու գարտուս զը — դու ալն կարդում ես
գէու գարտին զը — նա ալն կարդում է
և ալլն.

սուրվիցին զը — ես ալն սովորեցի
սուրվիցէուր զը — դու ալն սովորեցիր
սուրվիցէու զը — և ալլն.

գարտացուս զը — ես ալն կարդացի
գարտացալր զը — դու ալն կարդացիր
գարտուց զը — և ալլն:

Այսպիսով, թեքական միջոցով, այն էլ ներքին թեքման միջոցով, բարբառն արտահայտում է բառի զանազան իմաստով դերասերվող ֆունկցիան. սա մի հատկություն է, որը չունի մեր ոչ մի բարբառը: Դա հիշեցնում է հնդեվրոպական նախալեզվի ալտերնանսը (ձայնդարձը), որի պատճառներն ու հիմնավորումները գիտությունը հայտնի չեն: Ալտերնանսի նման հետքեր կան սլավոնական, հունական և այլ լեզուներում. հայերեն լեզվի մեջ հնդեվրոպական ձայնդարձը ստացել է ձևաբանական իմաստ, գրաբարում դարձել է ներքին թեքման երևույթ և խոնարհման խառը տիպի ցուցանիշ: Աշխարհաբարում համարյա չկան դրա հետքերը և մեր բարբառներից, ըստ երևույթին, Քաբուտիկի բարբառն է հեռավոր ձևով պահպանել այդ, որոշ չափով սահմանափակում ստացնելով այդ երևույթի գործածություն մեջ:

2. Քաբուտիկի բարբառի 2-րդ առանձնահատկությունը երկհնչյունների առատությունն է: Այսպես, Քաբուտիկի բարբառում կան հետևյալ երկհնչյունները.

ալ. օրինակ՝ կայն (գինը), թինայր (թոնիրը), գաղայնդ (կաղինը).

եյ. օրինակ՝ թէյփ (թեփը), ձէյձ (ծեծը), հէյդ (հետը), թէյլ (թեկը).

օ՛ււ. օրինակ՝ ամօուռ (ամառը), արծօութ (արծաթը), պօուրց (բարձր).

ա՛ււ. օրինակ՝ արցաունք (արցունքը), տաուռ (դուռը), նաուռ (նուռը).

ուա՛. օրինակ՝ ախպուար (եղբայրը), ուադ (այդ).

ուօ՛. օրինակ՝ ուօշք (աչք), լարուօնջ (նարինջ).

օյ. օրինակ՝ առճօյն (առաջինը), ուռչօյր (առջերը):

Քաբուտիկի բարբառն ունի նաև եռահնչյուններ, որոնց թիվը չորս է.

օ՛յը. օրինակ՝ ախպօյըր (աղբիւրը), բօյըրդ (պորտը), հօյըրթ (հորթը).

ուա՛յ. օրինակ՝ քուայր (քույրը), քուայն (քոնը).

ուօ՛ը. օրինակ՝ ձուօրք (ծալր), սիրեւուօ լիմ (սիրելու եմ).

ուե՛յ, օրինակ՝ ընդուէյզ (ընկուզը):

Բաց ամենազարմանալին այն է, որ Քաբուտիկի բարբառն ունի նաև քառահնչյուններ, ընդամենը երեքը, որոնց արտասանությունը համարյա անհնարին է այլ հայերի համար.

ուօ՛յբ. օրինակ՝ հաժգուօլթ (հաժկիթը), ծըղլուօլըտ (ծղրիդ), ծուօլըն (ծիւն), լուօլըս (լույս)։

ուալբ. օրինակ՝ տուալբը (դաշտը)։

ուօ՛լբք. օրինակ՝ դարտուօլք (կարդալք-կարդալիք), գարտուօլբը (կարդալիք)։

Այդ ամենը մենք նկատում ենք շեշտված վանկում, հիմնականում բառակղբի և բառամիջի փակ վանկում։ Բառավերջի բաց վանկում, երբ հաջորդում է «զը» դերանունը¹, ամեն մի պարզ ձայնավոր վերածվում է երկհնչյունի կամ եռահնչյունի. օրինակ՝

գարդացա և գարդացու՛ն զը.

սուրվիցը և սուրվիցի՛ն զը.

սուրվըցու և սուրվըցե՛ու զը և այլն։

Քաբուսիեի բարբառի այս ևրևույթը հիշեցնում է Արամոյի բարբառը, սակայն այդ տեսակետից Քաբուսիեն ավելի առաջ է գնացել։

Սակայն Քաբուսիեի բարբառը Արամոյից տարբերվում է նրանով, որ շեշտի տակ ունի նաև պարզ հնչյուն, մինչդեռ Արամոն շեշտի տակ ունի միայն երկբարբառ կամ երկար ձայնավոր։

Մեզ թվում է, թե Քաբուսիեի բարբառի շեշտի տակ պարզ ձայնավորը երկար չէ, այլ սովորական գրական որակի։ Սակայն դա նուրբ գործիքներով ստուգելու կարիք ունի։ Թե Արամոյի և թե Քաբուսիեի բարբառների երկբարբառներն ու եռաբարբառները առաջացել են հայերենի ձայնավորների այն վիճակից, երբ նրանք երկար էին արտասանվում՝ դեռ ժառանգված լինելով հնդեվրոպական նախալեզվից. ուրեմն՝ այդ բոլոր երկբարբառները կամ հնդեվրոպական երկբարբառների շարունակությունն են, կամ հնդեվրոպական երկար ձայնավորների հետագա զարգացումը և վերածումը երկբարբառի։

Միայն նկատելի է, որ Քաբուսիեի բարբառում բառի մեջ շեշտը դարձել է ուժգնության, այսինքն՝ սովորական հայկական շեշտ, մինչդեռ Արամոյի բարբառում շեշտը մնացել է տոնիկ, այսինքն՝ հնագույն հայկական կամ հնդեվրոպական։

Քաբուսիեի բարբառի բաղաձայնական համակարգը պատկանում է տեղաշարժ-տեղափոխության խմբին, այսինքն՝ այն խմբին, որին պատկանում են Կիլիկիայի և Անտիոքի շրջանների համարյա բոլոր բարբառները։

¹ Տե՛ս էջ 551

Այսպես՝ պահպանված են բոլոր հնդեվրոպական ձայնեղները, որի հետեանքով գրաբարի խուլերը արտասանվում են ձայնեղ: օրինակ, կարկուտ > գարգէլդ, պատ > բուդ, տասն > դօուս, ծեծ > ձէլծ, ճիւղ > ջնուղ:

Հնդեվրոպական շնչեղ ձայնեղները, որոնք գրաբարում վերածվել են ձայնեղների, այս բարբառում կատարում են մի տեղաշարժ ևս և վերածվում են խուլերի:

Օրինակ՝ բան > պէուն, գեղին > տիղալն, գոգ > կիկ, կէլկ, ձիւն > ձայն, ծուծլըն, ջուր > ճէլր, ճայր:

Բարուսիի բարբառի հոլովումը գգալի չափով պարզացել է, անձնանունների գործիական հոլովը չկա: Գործածվում է սեռականը «հէլդ» հետադրութեամբ:

Իրի անունների գգալի մասը նույնպիսի գործածութեւն ունի, բայց որոշ մասը գործիականում ունենում է «ու» վերջավորութեւնը: Ըստ բարբառի հնչյունական օրենքի արդ վերջավորութեւնը կարող է առաջացած լինել և «աւ» և «ով» ձևերից. օրինակ՝ քարու, ճրու, գիղըցու:

Հայցական որոշյալը միշտ ունենում է «զ» նախդիրը և նման է ուղղական որոշյալին, իսկ հայցականի անորոշը նման է ուղղականի անորոշին:

Անորոշ ուղղ. մար,	Անորոշ հայց. մար.
Որոշ. ուղղ. մոււր (մայրը),	Որոշ. հայց. գմուար:

Բացառական հոլովում ձայնավորով սկսվող բառերը ստանում են «յ» նախդիրը:

Դերանունների կառուցվածքի մեջ արտասովոր բան չկա, բացի այն, որ բարբառը ճանաչում է այս, այդ, այն դերանունները. սա, դա, նա դերանուններին տեղյակ չէ: Ըստ իր ներքին ֆլեքսիայի օրենքի դերանուններն ունեն հետեյալ արտասանութեւնը.

Անձնական

Ուղղ. իս, էյս, տէուն,	տաուն,	միք,	մէլք,	տաք,	տաք
Սեռ. էյմ, այմ, ք' օ,	քուսլն,	միր,	մայր,	ծիր,	ծայր

Ցուցական

Ուղղ. ան,	անդ,	անն,	ուաս,	ուադ,	ուան
Սեռ. անիր,	անդիր,	անիր,	ասէլր,	անէլր,	անէլր

Արամոյի բարբառի «զս» անաֆորիկ դերանունը առկա է նաև Քաբուսիի բարբառում «զը» տեսքով, նրա ծագման մասին ասված է Արամոյի բարբառի ուսումնասիրություն մեջ:

Սոնարհումը շատ հետաքրքրական է. օժանդակ բալի խոնարհումը ունի հետաքրքրական ձևեր. երբ նախադասությունը միայն օժանդակ բալով է, մի ձևն է գործածվում, եթե «զսն» հաստատող բառ էլ կա, մի այլ ձևն է գործածվում. օրինակ՝ էյս իմ, բայց՝ իս դսն գում. մէլք իք, բայց՝ միք դսն գում. դսուն իս՝ բայց՝ դսն դսն գում. տաք անք, բայց՝ տանք դսն գսնք. ուսն ը բայց՝ ան դսն գը և այլն:

Սովորական խոնարհումը ունենում է «գու» մասնիկը, որին հավասար գործածվում է «գէու» մասնիկը: Նկատվում է բարբառում երեք խոնարհում ի, ե, ա:

Գէսն սոնրվէյմ (սովորեմ), գէու սիրիմ (սիրեմ), գէու գարտում (կարգամ):

Եզակի երևույթ է այդ բարբառում անցյալների կազմությունը: Բոլոր երեք խոնարհումների համար անցյալի անկատարը բաշին ավելացնում է վերջից «իր» անփոփոխ բառ-մասնիկը, որ ծագել է օժանդակ բալի «էր» ձևից. այս անփոփոխ բառ-մասնիկը ավելանում է բայաձևերի բոլոր անցյալների վրա, բացի անցյալ կատարյալից. երրորդ դեմքում մասնիկը միանում է բալին և դառնում վերջավորություն:

Երեք խոնարհման բալերը անցյալի անկատարի առաջին դեմքում ունենում են «մ» վերջավորությունը, երկրորդում «բ», հոգնակի ունենում են՝ «աք», «իք», «ին» գրաբար վերջավորությունները, որոնք արտասանվում են այսպես. ալք, անք, այն. օրինակ՝

գէսն սոնրվայմ իր	գէսն սոնրվայք իր
գէսն սոնրվայր իր	գէսն սոնրվանք իր
գէսն սոնրվիր	գէսն սոնրվայն իր

Երկու խոնարհման բալերի վերջավորությունների գրական արտասանությունը կլինեն՝ էիմ, էիր, էր, էաք, էիք, էին, այսինքն՝ միանգամայն գրաբարյան, բացի առաջին դեմքի «մ»-ից: «Ա» խոնարհումը ունենում է այսպիսի վերջավորություններ.

գէու գարտուօնր իր
գէու գարտուօնր իր
գէու գարտիր

գէու գարտուօճը իր
գէու գարտուաք իր
գէու գարդուօճըն իր

Այս խոնարհման բայերի վերջավորությունների գրական արտասանությունը կլինեն՝ ալիմ, ալիր, ալր, ալաք, ալիք, ալին, ալսինքն՝ միանգամայն գրաբարյան, բացի առաջին դեմքի «մ»-ից: Վաղակատարի ձև բարբառս չունի, հարակատարը գործ է ածվում վաղակատար-հարակատարի փոխարեն, ունենալով անալիտիկ կազմություն, օրինակ՝ սոնրվըցէնձ իմ... սոնրվըցէնձ այմ իր:

Ապառնին կազմվում է ապառնի դերբայով (սուրվիլուօրջ իմ), հարակատարն էլ՝ հարակատար դերբայով. սրանց անցյալի ձևերը կազմվում են ներկալի օժանդակ բայի ձևերով. իսկ վրան ավելացվում է «իր» անփոփոխ բառ-մասնիկը:

Միրիլուօրջ այմ իր... սուրվիլուօրջ այմ իր և այլն:

Անցյալ. կատարյալի կազմությունը պահպանել է գրաբարյան ձևերի մեծ մասը հարազատությունը, սակայն իր սեփական արտասանությամբ. օրինակ՝

Սուրվիցը սուրվիցուր..., սիրիցա, սիրիցիր... գարտացա, գարդացիր...

Միավանկ բայերի խոնարհումը կատարվում է կանոնավոր բայերի նման, սակայն բոլոր միավանկ բայերն սկզբից ստանում են «ու» աճականը.

Գէու ուկում... (գալիս եմ)... գէու ուլում (գալիս եմ)... գէու ուզում (տալիս եմ):

Ժխտական խոնարհումը կազմվում է երկու տեսակ. շարունակական կազմվում է «չու» մասնիկով, որ առնված է «չա» ճյուղից (տե՛ս Արամոյի բարբառ). նշանակում է, թե Քաբուսիկի բարբառն օգտագործում է «չա» ճյուղի բարբառի մասնիկը, որ նշան է նրա միջբարբառային լինելուն: Բացի դրանից նա սովորական ներկան կազմում է հետևյալ կերպ.

իս չըմ սոնրվէյր	միք չըր սոնրվէյք
տէնն չըր սոնրվէյր	տաք չըր սոնրվաք
ան չը սոնրվէյր	անիք չըր սոնրվէյն

Այսպիսով, առաջին երեք դեմքերում (եզակիում) օգտագործվում է անորոշ դերբայը օժանդակ բայի հետ, իսկ հոգնակիում ամփոփոխ մնում է օժանդակ բայը (չըր) և խոնարհվում է ինքը բայը:

ՀԱՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Քարուսիների բարբառում հայերենի ձայնավորներն այնքան փոփոխված են՝ հատկապես, շեշտի տակ, որ բառերը դժվարությամբ են ճանաչվում: Բարբառը շատ հարուստ է քմային ձայնավորներով և երկբարբառներով (ան, օ, ոն, էոն, անոն, օնոն): Գրաբարի համեմատությամբ կատարվող փոփոխությունները հետևյալն են:

Ա.

Ա>ան բառի սկզբնաձևի նախաշեշտ վանկերում.

հազցնել>հանքցնել, աղոխ>աղղղոն, ալևոր>հանլվիր, աղալ>
>անղիլ, աղաջուր>անղղճէր, աղւոր>անղվիր, աղել>անղղիլ,
աղջիլ>անղէն, աղտոտել>անղղղիլ, աղքատ>անղքուդ,
աղօթք>անղութք, աման>անմուն, ամանուն, ամլճնա, ամիս>
ամէս, ամպել>ամբիլ, անէծք>անիծք, անիծել>անիծիլ,
անձրել>անձրիվ, անօթի>անութա, ապրիլ>աբրիլ, ասեղ>
անսիղ, ասել>անսիլ և այլն:

Ընդհանրապես բարբառի տեղեկեցն է բառասկզբի վանկում «ա» ձայնավորը քմայնացնել: Կոնտեքստային վիճակում հաճախ այս քմայնացումը կորչում է. օրինակ՝ անրմանդ || աս արմանդ (արմունկ), պանղլը || աս պագլին (բակլա):

Ա>ի. համեմատաբար քիչ դեպքերում՝ բառասկզբին. օրինակ՝
ալիւր>իլէր, աճել>իջիլ, անել>ինիլ, աշել (աչքել)>իշիլ,
աշունք>իշշանք:

Ա>ու, ու. միշտ վերջին վանկում բառի սկզբնաձևի մեջ, շեշտի տակ, որ հաճախ արտասանվում է երկար, իսկ կոնտեքստում լինում է օու կամ էու.

օրինակ՝ ամառ>ամուռ, ամօուռ, առանց>առունց, արդար>արտուր,
արտօուր, արծաթ>արձութ, արձօութ, բարձ>պուրց, պօուրց՝
բերան>պիրուն, պիրէուն, բան>պուն, պէուն, երկաթ>իր-
գութ, իրգէուլ, թաղ>թուղ, թէուղ, թարախ>թէրուխ, թէ-
րէուխ, լաց>լուց, լէուց, լար>լուր>լէուր, խաւար>խավուր
խալէուր, մաղ>մուղ, մէուղ, ծանր>ծունդր, ծառ>ձուր,
ձօուռ, ծիծաղ>ձիձուղ, կաթ>գութ (կաթիլ), կալ>գուլ,

գէուլ, կամ>դում, գէում, կամար>գամուր, գամէուր, կապ>
գուբ, գէուբ, կարաս>գարուս, գարէուս, կաւ>գուվ, գէուվ,
հազ>հուզ, հէուզ, համ>հում, հէում և այլն:

Ա>ը, իե. լինում է սովորաբար «գ» կամ «կ» (նգ, նկ) հնչյուններ-
րից առաջ և բառավերջի բաց վանկում. օրինակ՝
ժանգ>ժընգ, ժիենգ, խակ>խըգ, ծակ>ծըգ. խալտառակ>խա-
տարըգ. ձագ>ծըգ, ծիեք, ճրագ>ջըրըկ, ջրիեկ. յստակ>իս-
տըգ, իստիե, շալակ>շալըգ, շալիե, պսակ>բըսըգ, բըսիե,
տափակ>դափըգ, փեթակ>փիթըգ, փիթըիե. քուռակ>քու-
ռըգ, քուրիեւ. տղա>դըղը, հիմա>հիմը. այսպես նաև ան-
ցլալ կատարյալի առաջին դեմքում, օրինակ, հասկացա>հաս-
գըցը. նստա>նըստը:

Ա>ու. սովորաբար միավանկ բառերի սկզբին և սկզբնաձևի մեջ,
իսկ կոնտեքստային վիճակում երկբարբառային՝ էու կամ
օու, ուօ. աղ>ուղ, էուղ, աղը>ուղպ, էուղպ, ամպ>ումբ,
էումբ, արջ>ուրջ, օուրջ: «Աչք» բառը լինում է աշք, ուօշք:
«Արիւն» բառը լինում է «վիւրէն», «արիւնոտ» — «վիւրիւնէդ»,
«բաժին» և «բաժանել» բառերի մեջ «ա»-ն վերածվում է «ի»
ձայնավորի. բաժին>պիժին, բաժանել>պիժնիլ:

Ա>ու, էու. շատ հաճախ բառավերջում, օրինակ՝ ծարաւ>
ծարու, կաքաւ>գաքու, գաքէու. կտաւ>գըղու, գըղէու, հաւ>
հու, հէու, ցաւ>ցու, ցէու:

Այս օրենքի հիման վրա գործիական հոլովում հաճախ գրա-
բարյան «աւ» կամ «հաւ», երբեմն նաև «ուվ» վերջավորության փո-
խարեն բարբառումս լինում է «ու». օրինակ՝ թղթով>թըլթու,
բարեաւ>պարու, գիշերաւ>կիշէրու, դանակաւ>տանգու:

Այսպես նաև անցլալ կատարյալի երրորդ դեմքում գրաբար-
յան «աւ» վերջավորության դիմաց բարբառս ունի «ու». օրինակ՝
նստաւ>նստու, հասկացաւ>հասգըցու, հաստացաւ>հասդըցու
և այլն:

Ե.

Ե>ի. սովորաբար շեշտի տակ սկզբնաձևում, կոնտեքստում լինում
«էլ» կամ «իե»:

Ածել>աձձիլ, աղաչել>աղչիլ, աղել>աղղիլ, անխելք>ան-
խիլք. ասել>ասիղ. աւել>ավիլ, ավէլլ. դեղ>տիղ, տէլղ.
գեղձ>տիղց, տիեղց. դե>տիվ, երես>իրիս, իրէլս. երինջ>

Ն մու, է՞ու, օ՞ու և նման երկբարբառների վրա չենք դնում — նշան,
քայց պիտի ենթադրել:

իրէջնջ, թել>թիւ, թէլլ. թեփ>թիփ, թելփ. խեղճ>խիղճ.
ծեծ>ծիծ, ձէլձ. հետ>հիդ, հէլդ. հեշտ>հիշդ, հելշդ. ձմեռն>
>ծմիռ (կոնտեքստում՝ ծրմայր), ճեղք>ջիղք, ջիեխք, մեծ>
մինձ, մէյնձ և այլն:

Ե>ի. նախաշեշտ վանկերում.

բերան>պիրուն, բերել, պիրել, գետին>կիզէյն, լիղի>լիղւ-
ղեղին>տիղէյն, երկաթ>իրգութ, երկայն>իրգան, երկանք>
իրգընք, երկինք>իրգանք. թեթե>թիթիվ. խելօք>խիլք.
հերիք>հիրնք, հերու>հիրօու և այլն:

«Սիսեռ» բառը լինում է սիսիռ, սիսօլլո, նաև՝ բեռ>պիռ, պօլլո,
ձեր>ծիր, ծօլլո:

Ե>ա. ձեռք>ձար, ծուար, ծիւլա:

Եւ>իվ. էյվ, օրինակ արեւ>արիվ, արէյվ, անձրեւ>անձրիվ, անձ-
րէյվ, թեւ>թիվ, թէյվ. սեւ>սիվ, սէյվ.

Ե>ը. գերեզման>կրրըզմուն.

է>ի. կոնտեքստում՝ էլ, օրինակ՝ էլ>իլ, էլլ. կէս>գիս, գէյս,
ձէթ>ծիթ, ծէլթ. սէր>սիր, սէյր. մէջ>միճ, մէլճ, մէջք>
միշք, մէլշք և այլն:

Բառակցքին «ե» հնչյունը վերածվում է «ի» հնչյունին՝ սկզբը-
նաձևում, կոնտեքստում՝ «էյ» կամ «ի» հետեւյալ բառերում.

Եզր>իզգիր. երգ>իրկ, էյրկ. երես>իրես, իրէյս. երինջ>
իրէյնջ, իրայնջ, երկաթ>իրգութ, իրգէութ, երկայն>իրգան.
երկանք>իրգընք, իրգինք. երկինք>իրգանք>իրգանք, ես
>իս, էյս:

Բացի այս, ելանել բառը դառնում է ըննիլ, եղբայր>անի-
պար, ախպուար, երեսուն>լարսուն, երեք>ըրք, եղջիւր>ախ-
ճէլլ, ախճալլ, իսկ՝ երբ>լիփ:

Երեկոյ բառի փոխարեն ունենում են տիրգուաք (տալ+երե-
կոյք):

Ի.

«Ի» ձայնավորը շեշտի տակ նույնպես շատ մեծ փոփոխու-
թյուն է կրում, նրա զրական արտասանությունը շեշտի տակ հա-
մարյա չի հանդիպում, բայց շեշտից դուրս պահպանվում է. նկա-
տելի են հետեւյալ օրինաչափությունները.

Ի>ա. բաց վանկում, բառավերջում, շեշտի տակ և բառի սկզբնա-
ձևում. կոնտեքստում լինում է կամ «է», կամ «էլ», երբեմն՝ օր.

Ազի>ակա, աղաւնի>աղվըննա, ալգի>իկկա, իկկէն. անալի
>ալլա. անօթի>անութա. գարի>կարա, կարէյն. գիւղացի>

՝կիղացա. գինի՝կինա, կինէյն, գրացի՝գրացէյն. կաշի՝գիշա, գիշէն. լղի՝աղղա, աղղօր. ոսկի՝խակա, իսկէյն. ջորի՝ճիրա, ճիրէյն. տարի՝գարա, գարէյն, հկեղեցի՝գեղըցա, գեղըցէն: Երբ երկու «ի» միասին են լինում, արտասանվում են «էյ», գեղըցէյն (հկեղեցիին), կաղնի՝կաղնա, գաղնէյն, հօգի՝հիկկա, հիկկէյն:

Ձի և քի բառերը գործածվում են «ն» հոգով, թեև հոգի նշանակութունը կորած է, առանց ն-ի այդ բառերը չկան, ուստի «ի»-ն այս բառերի մեջ գործածվում է շեշտյալ փակ վանկի օրինաբով, որ տես՝ ներքևում:

Ի՝էյ, է. շեշտյալ փակ վանկում բառի սկզբնաձևում, կոնտեքստում լինում է «այ», նման Արամոյի բարբառի. օրինակ՝

Անկողին՝ունգուղէն, ունգուղայն. արճիճ՝արջէջ՝արջալջ, գին՝կէյն, կայն. գիրկ՝կէլլգ, կալլգ. երինջ՝իրէյնջ, իրայնջ. թոնիր՝թիհէլլ, թինալլ. ծիծ՝ձէյձ, ձայձ. կաղին՝կաղէյնդ, գաղայնդ. կարմիր՝գարմէլլ, գարմալլ. հինգ՝հէյնկ, հայնկ, հին՝հէյն, հայն. ձի՝ձէյն, ձայն. թի՝թէյն, թայն. միամիտ՝միամէլլ, մոխիր՝մախիլլ, մախիալլ. շիլ՝շէյլլ, շալլ. ոշիլ՝իճէլլ, իճալլ. չամիչ՝չամէլլ, չամալլ. վիզ՝Վէլլ, վալլ. ցից՝ցէլլ, ցալլ:

Ի՝էյ բառակցբին, օրինակ՝ ինն՝էյնն, ինքը՝էյնք, ինձ՝էյնձ (վագր): Կոնտեքստում լինում է «այ» օրինակ՝ այնձ:

«Ի» ձայնավորը «ք» կամ «նք» հնչյուններից առաջ արտասանվում է սկզբնաձևում «ն», իսկ կոնտեքստում՝ ա, օրինակ՝ աղիք՝նղնք, աղաք. բանալիք՝պնլնք, պալանք. երկինք՝իրգնք, իրդանք. հերիք՝հիրնք, հիրաք. մարմին՝մնրմննգ, մարմանգ:

Երբ, սակայն, «ի» ձայնավորն ընկնում է գ (կ) հնչյունից առաջ, վերածվում է ձայնավորի «ն» սկզբնաձևում, իսկ կոնտեքստում «գ» հնչյունը կորչում է, «ի» ձայնավորը վերածվում է ա ձայնավորի, որին հաջորդում է նվազ զգացվող դադարով մի թույլ «ա». օրինակ՝ կնիկ՝գըննգ, գընա՛ա. ծաղիկ՝ծնղագ, ձաղա՛ա, հատիկ՝հնղնգ, հաղա՛ա. տիկ՝դնղ, դա՛ա:

Բացի այդ կանոններից մի քանի բառեր կատարում են շեղում հետևյալ կերպ.

հակիթ հալգալթ, հալգուճլթ, քրտինք՝քրդանք, քըրդուօնք, նարինջ՝լնրննջ, լարուօնջ, սիրտ՝սիրդ, սօլլրդ, առաջին՝արջօլլն, հիմա՝հնմը. ծղրիդ՝ծղղլալտ, ծղղլուճլտ:

Գրաբար լեզվի «ո» հնչյունը նույնպես մեծ փոփոխություն է ենթարկվում Քաբուսիեի բարբառում: Մեծավ մասամբ «ո»-ն արտասանվում է «ի».

Ո>ի. բառասկզբին հետևյալ բառերում.

Ոջիլ>իճէլլ, իճալլ. ոսկի>իսկէ, իսկալն, ոսկոր>իսկիր, իսկայր. ոսկրեալ>իսկըրը. որոճել>իրջիլ. ոլորել>իլլորիլ:

Ո>վը. մի քանի միավանկ բառերում բառասկզբին. ոսպ>վըսք. ոտն>վըդ. որձ>վըրծ. բայց՝ որդ>վիրթ, վօլըրտ. հոգն. վիրտընօյր: Ողորմել բառը լինում է «ուղուրմիլ».

Վ-ն արտասանվում է շատ թեթեւ: Այսպես նաև գոյականների գործիականում, երբ «ու» չէ, ապա արտասանվում է շատ թեթեւ «վ».-ով>«ուվ» կամ «ոնվ»:

Ո>ի. զանազան դիրքերում, հատկապես շեշտի տակ բառի սկզբնաձևի մեջ, իսկ կոնտեքստում սովորաբար լինում է «էյ», քիչ դեպքերում՝ «օյը, մի դեպքում էլ՝ «ալ»:

Բոկիկ>պիգանկ, գոգ>կիկ, կէլկ.՝գորտ>կիրդ, կօլըրդ. թագավոր>թագավիր. թոնիր>թինէյր, թինալր. խնձոր>խընձիր, խնձէյր. խնոցի>խնից, խնէյց. խոզ>խիզ, խէյզ. խոզան>խիզզուն, խիզզէուն. խոշոր>խուշիր. խոտ>խիտ՝ խէյտ. խորոված>խիրվէռձ. խոփ>խիփ, խէյփ. սխտոր>սըխտիր, սըխդէյր. կոխել>գիխիլ. հոգի>հիկկա. հողոտ>խուղիդ, խուղէյդ. հորթ>հիրթ, հօլըրթ. հոտ>հիդ, հէյդ. հոտել>հիդդիլ. հոտոտել>հիդվդիլ. հոր>հիր, հէյր. մատնոց>մատնից, մաղնէյց. մոմ>միմ, մէյմ. նոր>նիր, նէյր. շնորհաւոր>շընըֆիր. չոր>չիր, չէյր. չորութիւն>չիրութէն. պորտ>քիրդ, քօլըրդ. ջորի>ճիրա, ճիրէն, սապոն>սաբին, սաբալն. սղոց>սըղից, սըղէյց. փշոտ>փըշիդ, փըշէյդ, փոր>փիր, փէյր:

Ով>ու կամ ուվ.

ծով>ծու, ձէ՛ու, կով>գու, գէ՛ու, գովել>կուվիլ:

Ո>ու. ոն. սովորաբար «դ» կամ «խ» հնչյունից առաջ. նաև՝ «ր» հնչյունից առաջ.

ազոխ>անզուխ, ազէուխ, դող>տոնդ, տէնդ, շող>շոնդ, շէ-

ոնդ, կող>գոնդ, գէննդ, սոխ>սոնխ, սէուխ. խոր>խուրօ.
չորք>չուք. սովորել>սոնրվիլ. փորձանք>փուրցընք, փուր-
ցիենք, ժողովել>ջողվիլ, ձող>ժոնդ. մոխիր բառը լինում է
մախխէյր, մախխայր:

ՈՒ.

«Ու» ձայնավորը սկզբնաձև միավանկ բառերի սկզբին լինում է «էյ», իսկ կոնտեքստում՝ «այ» հետևյալ բառերում.

Ուլ>էլլ, ալլ. ուս>էս, ալս. ուր>էյր:

Ուք բառում լինում է ալիթ, ուխտ>էնիտ, աուխտ, ուղտ>էնդդ, աուղդ:

Մի շարք բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում «ու»-ն
մնում է անփոփոխ. ուռենի>ուռինա. ուտելիք>ուղիլն, ուտել>
>ուղիլ, ուրբաթ>ոնրպոնթ, ուրփօնթ, ուղղորդ>ոնղիրթ:

Ուղարկել բառի սկզբի ձայնավորը դուրս է ընկնում՝
դոնրգիլ:

Ու>ա. լինում է սովորաբար «նկ», «նգ», «կ», «ք» հնչյուններից
առաջ, կոնտեքստում ա-ի քմայնացումը կորչում է, հաճախ
դառնալով ա'ա. օրինակ՝

Արմունկ>անրմանգ, արմանգ. արցունք>արցաունք (շեղում է).
դուք>տանք, տաք. եղունգ>ղանգ, դանգ. խունկ>խանգ, խանգ
ծունկ>ծանգ, ծանգ. մուկն>մանգ, մա'ա. ձուկն>ծագ, ծա'ա,
շուք>շանք, շաք. սնդուկ>սընդանգ, սընդա'ա. մօրուք>մու-
րանք, մուրաք. դադտուկ>կադդագ:

Ու>օու, կոնտեքստում՝ աու. դուռն>տօուր, տաուռ, թուշ
>թօուշ, թաուշ. թուք>թօուք, թաուք. նուռ>նօուռ, նաուռ.
շուն>շօուն, շաուն. ցուրտ>ցօուրդ, ցաուրդ. դդում>տըտ-
տօում, տըտտում. քառասուն>քառասօուն, քսան>քսօուն:

Ու>էլ, կոնտեքստում ալ. թութ>թէլթ, թալթ. լուծ>լէլծ, լալծ.
սկիսուր>իսգըսէյր, իսգըսայր. կուտ>գէլդ, գալդ. կուշտ>
գէլշտ, գալշտ. մութ>մէլթ, մալթ. կտուց>գըդէյնց, գըդալնց.
շուր>ճէյր, ճալր. փուշ>փէլշ, փալշ:

Ու>էու, էոն, աու. թուղթ>թէնիթ, թաուիթ. մուխ>մէնիխ,
մաուիխ. սիրուն>սիրէոն, սիրաուն. վաթսուն>վանցէոն,
վացցան. տուն>գէոն, դաուն. քուն>քէոն, քան:

Ու>օ, աու. բուրդ>պօրտ, պանուրթ. գլուխ>ղըլօխ, դըլանուխ:

Բառավերջում բաց վանկում «ու» ձայնավորն արտասանվում է երբարբառ էու կամ էո՞ւ. կոնտեքստում որոշյալ առման դեպքում ստանում է «ն» հոգը. միայն կատու և մեղու բառերն ունենում են գաղա՞նու և միղա՞նու ձևերը. թթու > թթէ՞նէ, լու > լէ՞նէ, լէնէ, կատու > գաղէ՞նու, գաղա՞նու. կծու > գըձձէ՞նու, մեղու > միղէ՞նու, միղա՞նու:

Այսպիսով, Քաբուսիկի բարբառը շեշտի տակ պարզ «ու» չի արտասանում, այլ միշտ երկբարբառ՝ էյ, այ, օու, աու, էու, էո՞ւ. այդ երկբարբառներից «ու» ձայնավորի գրաբարյան արտասանության մոտենում են «օու», «աու», «էու», «էո՞ւ» երկբարբառները:

բ. ԵՐԿԻՅԱՐԲԱՌՆԵՐ

ԻԼ

«ԻԼ» երկբարբառը մի շարք փոփոխությունների է ենթարկվում: ԻԼ > ի, կոնտեքստում «իե» հետևյալ բառերում. գիւղ > կիեղ, կիեղ, իւղ > իղ, իեղ:

ԻԼ > ալ, օլը, ուօլը հետևյալ բառերում. աղբիւր > ախպալը, ախպօլըր, ձիւն > ծալն, ծուօլն:

ԻԼ > էլ, ալ.

հետևյալ բառերում. իւր > էլր. հարիւր > հարէլր. նաև ութիւն ածանց ունեցող բառերում. օրինակ՝ նեղութիւն > նիղութէլն, նիղութալն. չարութիւն > չարութէլն չարութալն. պարապութիւն > բարաբութէլն, բարաբութալն:

ձիւղ բառը լինում է ջէուղ, ջաուղ. մրջիւն > մրճօում, մրճաում:

Այ

Այս երկբարբառը սովորաբար դառնում է պարզ ա. կոնտեքստային վիճակում՝ ուա, ուօ, օու, ուօլը. օրինակ՝ ալս, ալդ, ալն > աս, ադ, ա՛ն. գալ > կալ, երկալն > իրդա՛ն. ծալը > ձարք, ձուօլըք, ձիւքվէն (ծալրերը), ձալն > ծա՛ն, ծուա՛ն. մալը > մար, մուար, կղբալը > ախպար, ախպուար. ալծ > աձ, օուձ (հոգն. իձձիր):

Այդի բառը լինում է իկկա, ծայո բառը՝ շէլր, շալր:

Ոյ

Քաբուսիկի բարբառում սովորաբար վերածվում է «ալ» երկբարբառի, ինչպես Սվեդիայի բարբառում, իսկ կոնտեքստում՝ ուօլը, ուէլը, ուալը. օրինակ՝

Բոյն>պախն, պոլօլըն. բոյթ>պախնթ, պոլօլընթ, ընկոյզ>ընգալզ,
 ընգոլէլզ, թոլլ>թալլ, լոյս>լալս, լոլօլըս, լոլսին>լոլանը-
 լալս, լոլանլոլօլըս, կապոյտ>գաբբալդ, հօրաքոլլ>հօլրքալլր,
 հօլրքոլօլլր, մօրաքոլլ>մօլրքալլր, մօլրքոլօլլր, քոլլ>քալլր,
 քոլալլ:

«Զոյգ» բառը լինում է զագ, զրոյց>զրէլց, զրալց, դոլլ>տօ-
 լլր, տոլալլը (գաշտ, հանդ):

Ա.Ա.—Օ

«Ա.Ա» երկբարբառի դիմաց բարբառումս գտնում ենք սովոր-
 աբար «ու» կամ «ոյ», իսկ կոնտեքստում՝ օու, էոյ. օրինակ.

Ադօթք>ադութք, ադօութք, անօթի>անութա, կարոտել>գանու-
 դիլ, մօտ>մուդ, մէնդ, մօրաքոլլ>մօլրքալլր, մօտենալ>մոդ-
 գընիլ, մօրութք>մօլրաք, նօսր>նոսր, օդ>ուդ, օր>ուր, ակօս>
 անգոս, անգէոս:

Եօք բառը լինում է յօնթ, օրօրել>արոօրիլ:

Այսպիսով, Քարբուսիեի բարբառում գտնում ենք հետևյալ
 երկբարբառները. ալ, էլ, օու, անու, ուն, ուծ, օլ, էու, էոյ, էծ ապա՝
 հետևյալ եռաբարբառները, օլը, ուէլ, ունլ, ուծը, քառաբարբառ-
 ներ՝ ուծլը, ուծըլ, ուալլը:

Այս երկբարբառները լինում են սովորաբար շեշտի տակ և,
 ինչպես Արամոյի բարբառում, առաջացել են երկար ձայնավորնե-
 րի վերասերման պատճառով: Այժմ էլ բարբառի արտասանության
 մեջ նկատելի է շեշտվող ձայնավորի երկար արտասանութունը,
 որը, սակայն, առանձին որակ չի կազմում, ինչպես Արամոյի բար-
 բառում: Դրա պատճառն այն է, որ Քարբուսիեի բարբառում շեշտն
 արդեն դարձել է ուժեղնության շեշտ, մինչդեռ Արամոյի բարբա-
 րում մնացել է դեռ երաժշտական:

Գ. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ

Քարբուսիեի բարբառի պալթական բաղաձայնական սիստեմը
 պատկանում է տեղաշարժ-տեղափոխության խմբին, այդ նշանա-
 կում է, որ գրաբարյան ձայնեղները վերաժվում են խուլերի, իսկ
 խուլերը՝ ձայնեղների: Պատմահամեմատական տեսակետից Քարբու-
 սիեի բարբառը տեղաշարժել է միայն հնդեվրոպական շնչեղ ձայ-

նեղները, զրկելով նրանց ձայնեղությունից և շնչեղությունից, մինչդեռ հնդեվրոպական մաքուր ձայնեղները պահպանել է անփոփոխ. հնդեվրոպական խուլ պայթականները, ինչպես հայերենի բոլոր բարբառներում, ալատեղ ևս վերածվել են շնչեղ խուլերի. համարկարգն առաջացել է հետևյալ կերպ.

bh—պ	dh—տ	gh—կ
b—բ	d—դ	g—գ
p—փ	t—թ	k—ք
ph—փ	th—թ	kh—ք

Այսպիսով՝

հնդեվր. bh b p ph

գրաբ. բ պ փ

Քաբ. բարբ. պ բ փ փ

Քաբ. բարբ. պ բ փ

Քանի որ Քաբուսիեի բարբառը պահպանել է հնդեվրոպական մաքուր ձայնեղները, իսկ գրաբարը դրանք վերածել է խուլերի, ուրեմն Քաբուսիեի բարբառի բաղաձայնական սխառեմն առաջացել է ոչ թե հայերենի գրաբար վիճակից, այլ ավելի հին վիճակից: Համեմատելով գրաբարի հետ ստանում ենք.

բ > պ, գ > տ, կ > կ

Բան > պուն, պէուն, բանալ > պանիլ. բակ > պըգ, բա-
ժին > պիժէն. բարձ > պուրց, պօուրց. բերան > պիրուն, պի-
րէուն, դըում > տըտտօում, տըտտանում. դեղին > տիղէյն. դէմ >
> դիմ, գալլ > կալ, կուալ. դարի > կարա. գետին > կիղէյն. գի-
շեր > կիշիր, գոգ > կիկ, գորտ > կիրդ և այլն:

ն > ծ, չ > ճ

ձադ > ծըկ, ծինք, ձեռք > ծար, ծուար. ձէթ > ծիթ, ծէլթ.

ձիւն > ծալն, ծոնօյրն. ձմեռ > ծըմիւ, ծըմալլր.

ջորի > ճիրա. ջուր > ճէլր, ճալլր:

պ > բ, տ > գ, կ > գ

Պաղ > բուղ, պատ > բուդ, բէուդ. պատրուկ > բնդրնկ, բադ-
րաք. պորտ > բիրդ, բօլլրդ.

տալ > ուղիլ, տասն > դօուս. տիկ > դնդ, դնա. տուն > դէ'նն,
դաուն.

կաթ>գէլթ, գալթ. կալ>գուլ; գէտլ. կաղին>գաղէնդ, գա-
ղանդ. կապ>գոբ. կաքաւ>գաքու, գաքէու:

ծ>ծ, ց>ջ

Ծալել>ծանլիլ, ծաղիկ>ծաղանգ, ծաղանա. ծանր>ծուռ-
ղոր. ծառ>ծուր, ծօռու. ծարաւ>ծանրու. ծեծ>ծիծ, ձէշծ.
ճանճ>ջանջ, ջուանջ. ճեղք>ջիխք, ջիեխք. ճիւղ>ջուղ,
ջառղ:

Միայն մեկ բառի մեջ «ծ» աֆրիկատը տարրաւուծվում է և
վերածվում «ս»-ի, որ ձայնեղանում և դառնում է «զ». ծղրղդ>զըղ-
լալտ, զըղլուօլտ: Այս երևույթը Արամոյի բարբառում օրինաչա-
փութվում է:

Քաբուսիի բարբառում բառամիջի բաղաձայնը, հատկապես,
երբ ընկնում է երկու ձայնավորների մեջ, կրկնվում է, օրինակ

Աղիք>անղանք, ալգի>իկկա, դէսը>տիսսը. լսել>լըսսիլ
խաբել>խանպալիլ, խոզան>խիզզուն, խիզզէուն. ծալել>ծանլ-
լիլ. կալծակ>գիծձըգ. կանգնել>գաննիլ. խածել>խանձ-
ձիլ. հազալ>հանգզիլ. հալել>հանլիլ. հիւսել>հիսսիլ. հի-
սուն>հիսսուն. հնանալ>հընանիլ. հոգի>հիկկան. սպի-
տակել>խսբլկիլ. մազոտ>մանգզիդ, մածուն>մանձձէուն,
մաձձաուն. մոխիր>մուխիէլը, մուխալը. շնիկ>շըննըգ,
շըննիյի, քսել>քըսսիլ:

Այս երևույթը կա և Եդեսիայի բարբառում և էլ ավելի ու-
ժեղ արտահայտված՝ Արամոյի բարբառում:

Մեկ բառի մեջ «հ» հնչյունը վերածվել է «խ»-ի. հող>խոնդ,
որից և խուղիղ (հողոտ):

Խուլ շփական հնչյուններից առաջ կամ հետո նկատվում է,
որ սպասվող ձայնեղները խուլ են արտասանվում, բայց դա շատ
թույլ է արտահայտված.

«Ծանր», «սանր», «մանր» բառերի մեջ վերջին երկու բաղա-
ձայնների միջև ավելանում է «դ». ծունդր, մունդր:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. ՀՈԼՈՎՈՒՄ

Քաբուսիի բարբառի հոլովումը մեծ դժվարութիւններ չի
հերկալացնում. բառերի մեծ մասը պատկանում են «ի» հոլովման,

սեռականն ստանում է «ն» հոգը և նույնանում է տրականի հետ, քաջառականն ունենում է «էն» (ին) վերջավորութիւնն իրերի անուններում, իսկ անձերի անուններում կազմվում է վերլուծական սխտեմով, այսինքն՝ սեռական ձևով և «իրմէն» բառմասնիկով. անձի անունները գործիական հոլով չունեն, այդ հոլովի փոխարեն լինում է սեռական ձևը «հիդ» բառով, իսկ իրի անունները գործիականում ստանում են սովորաբար «ու», որ այս բարբառի օրենքով առաջանում է «ով» կամ «աւ» ձևից. երբեմն գործիականում լինում է «ուվ» վերջավորութիւնը: Հայցական հոլովը որոշյալ առման դեպքում ստանում է «զ» նախդիրը. ներգոյական հոլովածն բարբառումս գոյութիւնն չունի:

Քար

ջուր

զգալ

Ե ղ ա կ ի

Ուղղ. քուր, (նս) քօուր	ճէյր, (նս) ճայր տիկուլ.	(նս) տիկէնլ՝
Սեռ. ք' անէն (վրքքր-տակը)	ճըրէն	տիկ' անէն
Տր. , ք' անէն	ճըրէն	տիկ' անէն
Հայց. զքօուր	զճայր	զտիկէնլ՝
Բաց. ք' անին	ճըրին	տիկ' անին
Գործ. ք' անու	ճըրու	տիկ' անն

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. ք' անիր, նս	ճըրիր, նս	տիկ' աննն, նս
ք' անէյր	ճըրէյր	տիկ' աննէյն
Սեռ. ք' անիրէն	ճըրիրէն	տիկ' աննէյն (գէլթ-կոթ)
Տր. ք' անիրէն	ճըրիրէն	տիկ' աննէյն
Հայց. զք' անէյր	զճըրէյր	զտիկ' աննէյն
Բաց. ք' անիրին	ճըրիրին	տիկ' աննին
Գործ. ք' անիրու	ճըրիրու	տիկ' աննու

Տիկուլ (զգալ) բառը հոգնակի ուղղականում ստանում է «նի» (նա) վերջավորութիւնն (տիկ' աննն). որոշյալ դեպքում այդ վերջավորութիւնը դառնում է «նին», որ բարբառի օրենքով, արտասանվում է «նէյն». սեռականում «նին» վերջավորութիւնը դառ-

նում է «նուն» և բարբառին օրենքով, ըստ որի շեշտի տակ «ու» ձայնավորն արտասանվում է «էջ» (ոււ > էյւ, ուլ > էլլ), սեռակա-
նում ևս ստացվում է «նէյն» ձև՝ նման ուղղականին, բայց տար-
բեր ծագումով: Դրա հետեանքով ուղղական, սեռական, տրական
և հայցական (որ «զ» նախդիրով միշտ ունենում է ուղղականի
որոշյալ ձևը) հոլովածեքը նույնանում են:

Ուղղականում «ա» վերջավորությունն ունեցող
բառերի հոլովում

Դըղը—տղա

Եզակի

Հոգնակի

Ուղղ. դըղը, աս դըղան

դղաք, աս դղուաք

Սեռ. դըղայն

դղօյց

Տր. դըղայն

դղօյց

Հայց. դղան

զղուաք

Բայց. դղայն իրմէն կամ՝ դըղին

դղօյց իրմէյն

Գործ. դղայն հէյդ

դղօյց հէյդ

«Տղա» բառի հոլովման ժամանակ սեռականում առաջանում է
«ալին» հնչակապակցությունը, որ բարբառում դառնում է «ալն»
(դղայն), հոգնակին հոլովվում է գրաբարաձև. տղայք ձևը բարբա-
ռին օրենքով դառնում է «դղաք», իսկ «տղայց» ձևը՝ դըղօյց:

Ուղղականում «ի» վերջավորությունն ունեցող
գոյականների հոլովումը

Գիղըցա > եկեղեցի

Ուղղ. գիղըցա, աս գիղըցէյն

գիղըցաք, աս գիղըցաք

Սեռ. գիղըցէյն բէռդ (եկե-
ղեցու պատը)

գիղըցէյց

Տր. գիղըցէյն

գիղըցէյց

Հայց. գգիղըցէյն

գ՛իղըցաք

Բայց. գիղըցին

գիղըցէյց

Գործ. գիղըցու

—

ԴԷՌԸՆ > ՄՈՒՆ

Ուղղ. դէռն, ան դառն	դընվա, աս դընվէն
Սեռ. դէռն	դընվէն, դընվէյց
Տր. դէռն	դընվէն
Հայց. գդառն	գդընվէն
Բաց. դանին	դընվին, դընվէյց
Գործ. դանու	դընվընու

Մար > մար

սխալ > եղբայր

Ուղղ. մար, ան մար	սխալ, ան ախպուար
Սեռ. մար	ախպուար
Տր. մար	ախպուար
Հայց. գմար	գախպուար
Բաց. մար իրմէն	ախպուար իրմէն

Հ Ո Ղ Ն Ա Կ Ի

Ուղղ. միրիւր, աս միրէյր	ախպըրդաք, աս ախպըրդուաք
Սեռ. միրիւրէն	ախպըրդուց
Տր. միրիւրէն	»
Հայց. գմիրէյր	գախպըրդուաք
Բաց. միրիւրէն իրմէն	ախպըրդուց իրմէն

Գընա, դընան > կին

մարթ > մարդ

Ե Ղ Ա Կ Ի

Ուղղ. դընագ, ան գընան	մարթ, ան մարտրթ
Սեռ. գինգէն	մարթօն
Տր. »	»
Հայց. գգընան	գմարտրթ
Բաց. գինգէն իրմէն, գինգին	մարթօն իրմէն
Գործ. գինգէն հէլդ	մարթօն հէլդ

«գընա» ձևը գրականի «կինը» բառի ձևափոխությունն է:

Հ Ո Ղ Ն Ա Կ Ի

Ուղղ. գմանագ	մարտաք, աս մարտուաք
Սեռ. գմանէյց	մարթուց

Տր.	գաննէլց	մարթօուց
Հայց.	գ՛գաննաք	գմարտուաք
Բաց.	գ՛աննէլց իրմէն	մարթօուց իրմէն
Գործ.	գ՛աննէլց հէլդ	մարթօուց հէլդ

Ծառ > ձեռք

Ե գ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	ծառ, ծուառո	ծիրվա, նա ծիրվան
Սեռ.	ծիրօց	ծիրվան, ծիրվաց
Տր.	ծիրօց	ծիրվան, ծիրվաց
Հայց.	սծուառը (սծուառըիս)	սծիրվան
Բաց.	ծիրօցիս, ծիրօուց	ծիրվաց իրմէն, ծիրվընին
Գործ.	ծիրուվ	

Քարդուսիկի բարբառում ձայնավորով սկսվող գոյականներից առաջ գործածվում է «ի» նախդիրը, որ վերածվում է «լ» հնչյունին: Այդ «ի» նախդիրը լինում է սովորաբար հայցականի հետ և ցույց է տալիս շարժման ուղղութիւն կամ դադար. օրինակ՝ մուգըըը լամբօուր (մոտեցա ամբարին). Յամբօուր գէուրթում—գնում եմ ամբար. գէուրթում տալ լամբօուր—գնում եմ դեպի ամբար: Յուդան գէու ումնում—մնում եմ օդալում:

Բաղաձայնով սկսվող բառերից միայն «տուն» բառի հետ է գործածվում «ի» նախդիրը. օրինակ՝

Իս ի գէուն գէուրթում—ես գնում եմ տուն:

Իս ի գէուն նէստէ՞ծ իմ—ես տանը նստած եմ:

ԹՎԱԿԱՆԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Մէլմ, ըրգաք, ըրք, չուք, հանգ, վից, էօութ, ալթ, էննը, դօուս, դըսնըմըք, դըսվըրգաք, դըսվըրք դըսնըչուք, դըսնըհանգ, դըսնըվից դըսնըէօութ, դըսնըվալթ, դըսնըվէննը, քսուն, քսունմըգ... լաոսօուն, քաոսօուն, լիսսէ՞ն, վացցէնն, հարէր, ըրգը հարէր, էննը հարէր, հագուր:

Բ. ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Ե զ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. իս, էյս	տէոն, տաուն	միք, մէլք	տոնք, տաք
Սեռ. էլմ, ալմ	քծ, քուալն	միր, մալր	ծիր, ծալր
Տր. ընձը	քի,	միզ	ծիզ
Հայց. գէյս	զքիզ	զմիզ	զծիզ
Բաց. լէյմ իրմէյն	մինը		ծինը
	քինը		
	իրմէյնիս	միր հէլդ,	ծիր հէլդ,
Գործ. լէյմ հէլդ. հէլդ իտ, քը հէլդ	հիդվընէյս		հիդվընէլդ

Ինչպէս գոյականների մեջ, այնպէս էլ դերանուններում նկատում ենք երկու ձևեր, որոնցից մեկը գործածվում է կոնտեքստից դուրս, մյուսը կոնտեքստում: Այսպէս՝ կոնտեքստից դուրս և էական բայերի հետ առաջին դեմքի դերանունը լինում է «էյս», (էյս իմ), բայց կոնտեքստում լինում է «իս» (իս գէտկում): Սեռականում լինում է «այմ», «այմն ը» (իմն է), բայց կոնտեքստում՝ «էյմ թաուխթ»: Նույնպէս և երկրորդ դեմքի դերանունը. «տաուն իս» (դու ես) բայց՝ «տէոն գէտկում». «քուալն. ադ քուալնն ը — սա քոնն է, բայց՝ «քծ թաուխթ». «մէլք», «մէլք իք» (մենք ենք). բայց, «միք գէտկում», «մալր», «մալրն ը» (մերն է), բայց՝ «միր դաուն» (մեր տունը). «ծալր» «ծալրն ը» (ձերն է), բայց ծիր թաուխթ» (ձեր գիրքը): Երկրորդ դեմքի հոգնակի ուղղականի «դուք» բառը կոնտեքստից դուրս և օժանդակ բայերի հետ լինում է «տաք», «տաք ըք» (դուք իք), իսկ կոնտեքստում լինում է միայն քմայնացումով՝ տոնք, տաք գէտկածք (դուք եք ահա գալիս): Անձնական դերանունները գործիականի ձև չունեն և գործածվում են սեռականով և հետ (հէլդ) հետադրությամբ:

Ցուցական դերանուններ

Սրանք ևս գործածվում են երկու տեսակ՝ կոնտեքստից դուրս ու օժանդակ բայերի հետ մի կերպ, իսկ կոնտեքստում մի ալլ կերպ. այսպէս՝ կոնտեքստից դուրս և օժանդակ բայերի հետ լինում են. ուսա (ուսա ը—այս է), ուադ (ուադ ը—այդ է), ուան (ուանն ը—այն է), և ան (ան թաուխթ), ադ (ադ թաուխթ) ան (ան թաուխթ), ասիր, ասէլր (ասէլր ը—սրանն է), ադիր, ադէլր (ադէլրը դրանն է), անիր, անէլր (անէլր ը—նրանն է) և՛ ասիր (ասիր դաուն—սրա տունը), ադիր (ադիր դաուն), անիր (անիր դաուն):

Ե զ ա կ ի

Ուղղ. ան, ուսս	ան, ուսս	ան ուսն
Սեռ. անիւր, անէլը	անիւր, անէլը	անիւր, անէլը
Տր. անիւր	անիւր	անիւր
Հայց. զան	զան	զան
Բաց. լանիւր (իւրից)	լանիւր	լանիւր
անիւր իրմէն (անձից)	անիւր իրմէն	անիւր իրմէն

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. անիւք, անէլք	անիւք, անէլք	անիւք, անէլք
Սեռ. անից, անէլց	անից, անէլց	անից, անէլց
Տր. անից	անից	անից
Հայց. զանիւք	զանիւք	զանիւք
լանիւք մուգըցը	լանիւք	լանիւք
(սրանց մոտեցա)		
Բաց. լանից, լանից իրմէն	լանից, լանից	լանից, լանից
	լանից	լանից
	լանից	լանից

Գործողութիւնն ուղղութիւնն (հանգում) ցուց տալու համար
«ի>լ» նախդիրը հոգնակիւմ գրվում է հայցականի հետ:

Գ. Բ Ա Յ

1. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Ն ե ռ կ ա

էլս իմ	մէլք իք
դանուն իս	տաք անք
ուսն ը	անէլք ին

Ա ն ց լ ա լ ի ա ն կ ա տ ա ը

էլս ալմ իր	մէլք ալք իր
տառն ալր իր	տաք աք իր
ուսն իր	անէլք ալն իր

Երբ կարիք է զգացվում ասելու միայն «ես եմ, ես կամ», գործածվում է «կամ» բայը, որին նախորդում է հաստատող «զան» մասնիկ-բառը:

իս դան գում	միք դան գում
զէնն դան գում	տաք դան գում
ան դան գը	անիք դան գում
իս գալմ իմ	միք գալք իր
տէուն գալք իր	տաք գաք իր
ան գիր	անիք գալն իր

2. ԽՈՆԱՐՀՈՒՄ

Սահմանակաճ եղանակ

Ն ե ր կ ա

ի	ե
գէու սոնրվէյմ գէու սուրվայմ գը	գէու սիրիմ գէու սիրէյմ գը
» սոնրվէյս » սուրվայս գը	» սիրիս » սիրէյս գը
» սոնրվը » սուրվուս գը	» սիրը » սիրին գը
» սոնրվէլք » սուրվալք գը	» սիրիք » սիրէլք գը
» սոնրվաք » սուրվաք գը	» սիրաք » սիրաք գը
» սոնրվէյն » սուրվայն գը	» սիրին » սիրէյն գը

ՈՒ

գէու գարտում	գէու գարտում գը
» գարտուս	» գարտուս գը
» գարտը	» գարտին գը
» գարտուք	» գարտուք գը
» գարտաք	» գարտաք գը
» գարտուն	» գարտուն գը

Այսպիսով, «ի» խոնարհումը ներկայում ունենում է «էյմ» վերջավորություն, որ համապատասխանում է Քարուսիեի բարբառի հնչյունական կազմին, նույնը է՝ «ե» խոնարհման ներկան, որ ունենում է «իմ» վերջավորություն (ե>ի), իսկ «ա» խոնարհման ներկան՝ «ում» վերջավորություն (ա>ու): Ինչպես արդեն ասել ենք, երբ ուղիղ խնդիրը «գը» զերանունն է, խոնարհման վերջավորությունը ստանում է կոնանքստային պատկեր:

Անցյալի անկատար

Քարուսիների բարբառի անցյալի անկատարը կազմվում է բոլորովին ինքնատիպ և նմանը չունի հայ բարբառների մեջ: Եղակի առաջին դեմքում առկա է «մ» վերջավորությունը, որ հայերեն «Հա», «Կա», «Կը» ճյուղերի ոչ մի բարբառին հատուկ չէ, ապա՝ հոգնակի առաջին դեմքում, ինչպես բոլոր ժամանակներում, լինում են էյբ, իբ, աբ ձևերը, այսինքն՝ առանց ուղղակիների, որ լինում է գրաբարի անցյալ ժամանակների հոգնակի առաջին դեմքում: Բացի այս, անցյալի անկատարը ավելացնում է «իբ (=էբ) անսիփոփա բառ-մասնիկը անցյալի գաղափարն արտահայտելու համար, գրանով նմանվելով «Լ» ճյուղի բարբառներին: Այս «իբ» բառ-մասնիկն ավելանում է բոլոր բաղադրյալ ժամանակների խոնարհվող ձևերի վրա: Հոգնակի երկրորդ դեմքում բարբառս ունենում է աք (յք) վերջավորությունը, որ նույնն է գրաբարինի հետ (իք): Այսպիսով, անցյալ ժամանակների հոգնակին գրաբարյան է: Ներկան և անցյալի անկատարը կազմվում են և՛ «գէու, և՛ «գու» մասնիկներով:

Անցյալի անկատար

գէու սոնրվնյմ իր	գէու սիրայմ իր	գէու գարտուօնյմ իր
» սոնրվնյր իր	» սիրայր իր	» գարտուօնյր իր
» սոնրվիր կամ՝ գէու	» սիրիր կամ՝ գէու	» գարտիր կամ՝ գէու
սոնրվէյր (զբ)	սիրէր (զբ)	գարտուօնյր (զբ)
» սոնրվնյք իր	» սիրայք իր	» գարտուօնյք իր
» սոնրվնք իր	» սիրնք իր	» գարտունք իր
» սոնրվնն իր	» սիրան իր	» գարտուօնն իր

Անցյալի անկատար ձևերում պարզ երևում է, որ հոգնակի երկրորդ դեմքն ունենում է աք (յք) վերջավորությունը, որ համապատասխանում է գրաբարի «իք» ձևին:

Հետաքրքրական վերջավորությունն ունի «ա» խոնարհման բայը. այստեղ «մ» վերջավորությունից առաջ ընկնում է մի քառաբարբառ հնչյուն՝ ուօնյ:

Ա պ ա ո ն ի

Ապառնին կազմվում է ապառնի գերբայով և օժանդակ բայով. ապառնի գերբայի վերջավորությունն է երկար օ, որ արտասանվում

է ուօը երկբարբառացին հնչումով. այդ դերբային ավելանում է օժանդակ բայը:

սուրվիլուօը չիմ	սիրիլուօը չիմ	գարտիլուօը չիմ
» իս	» իս	» իս
» լը	» լը	» լը
» իք	» իք	» իք
» ւնք	» ւնք	» ւնք
» ին	» ին	» ին

Ա ն ց չ ա լ ի ա պ ա ո ն ի

Անցյալի ապառնին կազմվում է ապառնի դերբայով՝ վրան ավելացրած նախ այմ, այր... օժանդակ բայաձևերը և «իր» անփոփոխ բառ-մասնիկը.

սուրվիլուօը այմ իր	սիրիլուօը այմ իր	գարտիլուօը այմ իր
» այր իր	» այր իր	» այր իր
» իր	» իր	» իր
» այք իր	» այք իր	» այք իր
» աք իր	» աք իր	» աք իր
» ալն իր	» ալն իր	» ալն իր

Հարակատար—վաղակատար

Քաբուսիեի բարբառը վաղակատար ձևեր չունի, գործածական են հարակատարի ձևերը թե՛ հարակատար և թե՛ վաղակատար ժամանակներն արտահայտելու համար:

Հարակատար

սուրվէժձ իմ	սիրէժձ իմ	գարտացէժձ իմ
» իս	» իս	» իս
» լ	» լ	» լ
» իք	» իք	» իք
» ւնք	» ւնք	» ւնք
» ին	» ին	» ին

Անցյալ հարակատար

սուրվէնձ	ալմ իր	սիրէնձ	ալմ իր	գարտացէնձ	ալմ իր
»	ալր իր	»	ալր իր	»	ալր իր
»	իւր	»	իւր	»	իւր
»	ալք իր	»	ալք իր	»	ալք իր
»	անք իր	»	անք իր	»	անք իր
»	ալն իր	»	ալն իր	»	ալն իր

Անցյալ կատարյալ

սուրվիցը	սիրիցա	գարտացա	(գրբ. կարդացի)
սուրվիցուր	սիրիցիր	գարտացիր	(գրբ. կարդացիր)
սուրվիցու	սիրից	գարտուց	(գրբ. կարդաց)
սուրվիցուք	սիրիցուք	գարտացուք	(գրբ. կարդացաք)
սուրվիցաք	սիրիցաք	գարտացաք	(գրբ. կարդացիք)
սուրվիցուն	սիրվիցէն	գարտացալն	(գրբ. կարդացին)

Անցյալ կատարյալ

(կոնտեքստալն)

սուրվիցիս զը	սիրիցուն զը	գարտացուն զը
սուրվիցէուր զը	սիրիցէր զը	գարտացալր զը
սիրվիցէու զը	սիրէլց զը	գարտուց զը
սիրվիցէուք զը	սիրիցէուք զը	գարտացուք զը
սուրվիցանք զը	սիրիցաք զը	գարտացունք զը
սուրվիցէունք զը	սիրիցալն զը	գարտացունլն զը

Երբ անցյալ կատարյալից անմիջապէս հետո գալիս է երրորդ դեմքի դերանունը «զ» (զը—նրան) նախդիրով, ապա անցյալ կատարյալի առաջին դեմքի վերջավորութիւնը (ի) լինում է «ո՛ւա»։ օրինակ՝ գարգիցուն զը, շալիցուն զը։ Նկատի առնելով Քարոսի եւ Բարսեղի բարբառի հնչյունական օրենքները, կարելի է առանց վերապահութեան ասել, որ նրա անցյալ կատարյալի վերջավորութիւնները նույնն են գրաբարի հետ։

Բնական

Ա. պ. ա. ո. ն. ի

սուրվէյմ	սիրիմ	գարտում
սուրվէյս	սիրիս	գարտուս
սուրվը	սիրի	գարտը
սուրվէյք	սիրիք	գարտուք
սուրվաք	սիրւք	գարտաք
սուրվէյն	սիրին	գարտուն

Ա. պ. ա. ո. ն. ի (կոնտեքստալին)

սուրվւյմ գը	սիրէյմ	գարտում
սուրվւյս գը	սիրէյս	գարտուս
սուրվո՛ւս գը	սիրիե	գարտիե
սաբվւյք գը	սիբէյք	գաբաօք
սուրվւյք գը	սիրւյք	գարտոււք
սուրվւյն գը	սիրէյն	գարտուն

Ա. ն. ց. չ. ա. լ. ի. ա. պ. ա. ո. ն. ի

սնւրվւյմ իր	սիրալմ իր	գարտուօըլմ իր
սնւրվւյր իր	սիրալր իր	գարտուօըլր իր
սնւրվիր, սուրվիր (գը)	սիրիր, սիրէր (գը)	գարտիր, գարտուօըլր (գը)
սնւրվւյք իր	սիրալք իր	արտուօըլք իր
սնւրվւյք իր	սիրւք իր	արտոււք իր
սնւրվւյն իր	սիրալն իր	արտօ իրու

Պայմանական

Ա. պ. ա. ո. ն. ի

գը սնւրվէյմ	գը սիրիմ	գը գարտում
գը սնւրվէյս և ալլն.	գը սիրիս և ալլն.	գը գարտուս և ալլն.

Ա. ն. ց. չ. ա. լ. ի. ա. պ. ա. ո. ն. ի

գը սնւրվւյմ իր և ալլն.	գը սիրալմ իր և ալլն.	գը գարտուօըլմ իր և ալլն.
---------------------------	-------------------------	-----------------------------

Պայմանական եղանակի ձևերը կազմվում են ըղձական ձևերից «զը» մասնիկով: Այսպիսով, պայմանական եղանակի և սահմանական եղանակի ներկայի և անցյալի անկատարի ձևերը տարբերվում են մասնիկ-բառով, որոնք տարբեր ծագում ունեն. ըստ երևույթին ներկայի «գու» մասնիկն առաջացել է «կա» բառից, իսկ պայմանականինը՝ «գոջ» բառից:

Հարկադրական եղանակը կազմվում է ըղձականից՝ ավելացրած «բըր» մասնիկը և հաճախ գործ է ածվում որպես սահմանական ապառնի:

ԺԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ն Ե Ր Կ Ա Հ Ա Ր ՈՒ Ն Ա Կ Ա Կ Ա Ն

Հ ⁰ ու սուրվէյմ	Հ ⁰ ու սուրվայմ զը	Հ ⁰ ու սիրիմ
» սուրվէյս	Հ ⁰ ու սուրվայս զը	» սիրիս
» սուրվը	» սուրվուա զը	» սիրը
» սուրվէք	չու սուրվաք զը	» սիրիք
» սուրվօք	չու սուրվաք զը	» սիրաք
» սուրվէյն	չու սուրվայն զը	» սիրին
Հ ⁰ ու սիրէյմ զը	Հ ⁰ ու գարտում	Հ ⁰ ու գարտոմ զը
» սիրէյս զը	» գարտուս	» գարտոս զը
» սիրիե զը	» գարտը	» գարտիե զը
» սիրէյք զը	» գարտուք	» գարտոք զը
» սիրօք զը	» գարտաք	» գարտուաք զը
» սիրէյն զը	» գարտուն	» գարտոն զը

Ն Ե Ր Կ Ա Ս Ո Վ Ո Ր Ա Կ Ա Ն

իս չըմ սուրվէյր	չըմ սիրիբ	չըմ գարտուբ
տէուն չըր սուրվէյր	չըր սիրիբ	չըր գարտուբ
ան չը սուրվէյր	չը սիրիբ	չը գարտուբ
միք չըր սուրվէյք	չըր սիրիք	չըր գարտուք
տօք չըր սուրվօք	չըր սիրօք	» գարտօք
անիք չըր սուրվէյն	չըր սիրին	» գարտուն

Ն Ե Ր Կ Ա Կ Ո Ն Ս Ի Ք Ս Ս Ա Յ Ի Ն

չըմ սուրվայր զը	չըմ սիրէյր զը	չըմ գարտուր զը
չըր սուրվայր զը	չըր սիրէյր զը	չըր գարտուր զը
չը սուրվուա զը	չը սիրէյր զը	չը գարտուր զը

չըր սուրվալք զը	չըր սիրէլք զը	չըր գարաօք զը
չըր սուրվալք զը	չըր սիրալք զը	չըր գարաուալք զը
չըր սուրվալն զը	չըր սիրէլն զը	չըր գարաուօն զը

Ինչպէս տեսնում ենք, շարունակական ներկայի «չ⁰ու» ձևը Արամոյի բարբառի հետ նույնն է, որ նշանակում է՝ հա>հալ մասնիկի ժխտական ձևն է (ահա>ահու || չահա>չըհու>չհու>չ⁰ու): Ուրեմն՝ Քարուսիկի բարբառի զրական խոնարհման շարունակականը կազմվում է «կա» ճյուղի նման «ղէու» մասնիկով, իսկ ժխտական խոնարհման շարունակականը կազմվում է «Հա» ճյուղի նման հու>ու մասնիկով, իսկ սովորական ներկան «գու» մասնիկով, որ կարող էր առաջանալ և՛ «գոյ», և՛ «կա» մասնիկից: Այդ ամենն ապացույց են Քարուսիկի բարբառի միջճյուղային բարբառ լինելուն:

Անցյալի անկատար շարունակական

չ ⁰ ու սուրվալմ իր	չ ⁰ ու սիրալմ իր	չ ⁰ ու գարաուալմ իր
» սուրվալր իր	» սիրալր իր	» գարաուօլր իր
» սուրվիր	» սիրիր	» գարաիր
» սուրվալք իր	» սիրալք իր	» գարաուօլք իր
» սուրվալք իր	» սիրալք իր	» գարաուալք իր
» սուրվալն իր	» սիրալն իր	» գարաուօլն իր

Անցյալ սովորական և պայմ. ժխտական

չըմ սուրվալր (իր)	չըմ սիրալր իր	չըմ գարաուօլր (իր)
չըր » (ի)	չըր » »	չըր » (իր)
չըր սուրվիր	չըր սիրիր	չըր գարաիր
չըր սուրվալք (իր)	չըր սիրալք իր	չըր գարաուօլք իր
» սուրվալք (իր)	» սիրալք իր	չըր գարաուալք իր
» սուրվալն (իր)	» սիրալն	չըր գարաուօլն իր

Ա պ ա ո ն ի (սահմանական)

չը սորվիլուօը լիմ կամ սուրվիլւ չիմ	
չը սուրվիլուօը լիս	» չիս
չը սուրվիլուօը լը	» չը
չը սուրվիլուօը լիք	» չիք
չը սուրվիլուօը լալք	» չալք
չը սուրվիլուօը լին	» չին

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ո ն ի

չսուրվիլուօր ալմ իր կամ՝ սուրվիլուա չալմ իր

» ալր իր » չալր իր

» լիւր » չիւր

» ալք իր » չալք իր

» անք իր » չանք իր

» աւն իր » չաւն իր

Վաղակատար—հարակատար

չսուրվէնձ իմ կամ սուրվում չիմ

» իս » չիս

» ը » չը

» իք » չիք

» աք » չաք

» ին » չին

Անցյալի վաղակատար—հարակատար

չսուրվէնձ ալմ իր կամ սուրվում չալմ իր

» ալր իր » չալր իր

» իր » չիւր

» ալք իր » չալք իր

» անք իր » չանք իր

» աւն իր » չաւն իր

Երբ, սակայն, գործողության առարկան արդեն նշված է, և ներգործական բալը գործածվում է հարակատար ձևով, այդ դեպքում խոնարհումն ստանում է հետևյալ պատկերը:

Վաղակատար—հարակատար

չսուրվէնձ էլմ զը (կամ զիք) չսուրվէնձ էլք զը (կամ ձը)

» էլս սը (կամ սիկ) » անք զը (կամ ձը)

» իլե զը » էլն զը

Բառացի՝ ես չեմ սովորել այն: Այս դեպքում պետք է ընդունել, որ զիք>սիկ>զը ձևերի մեջ «զ» հայցականի նախդիրն է, իսկ մնացյալը՝ իք>իկ>ը, գերանուն է, որ կարող է լինել «ե» կամ «ի» արմատից: Այդ գերանունը, հավանական է, հնդեվրոպական «i» արմատ ունեցող գերանունն է, որ մնացել է հայերեն զի, իք, իմն գերանունների մեջ: Այս գերանունը անցյալի վաղակատար-հարակատարում դառնում է «զիր»=զի էր:

իս չսուրվէսն ձ ալմ զիր	միք չսուրվէսն ձ ալք զիր
տէուն » ալր զիր	տաք » անք ձիր (փոխ.՝ զիր)
ան » էր զը	անիք » ալն զը

«Զիր» ձևի վերածումը «ձիր» ձևի հետևանք է գիտսիմիլյացիայի:

Անցյալ կատարյալ

չսուրվիցը	չսիրիցա	չգարտացա
չսուրվիցուր	չսիրիցիր	չգարտացիր
չսուրվիցու	չսիրից	չգարտուց
չսուրվիցուք	չսիրիցուք	չգարտացուք
չսուրվըցանք	չսիրիցաք	չգարտացաք
չսուրվըցուն	չսիրիցէին	չգարտացաին

Անցյալ կատարյալ

(կոնտեքստային)

չսուրվիցին զը	չսիրիցուա զը	չգարտացուա զը
չսուրվիցեուր զը	չսիրիցէլր զը	չգարտացալր զը
չսուրվիցեու զը	չսիրէլց զը	չգարտուուց զը
չսուրվիցեուք զը	չսիրիցէաք զը	չգարտացուք զը
չսուրվիցաք զը	չսիրիցեուք զը	չգարտացուաք զը
չսուրվիցեուն զը	չսիրիցալն զը	չգարտացուալն զը

Բղական եղանակ

Ա ա ա ո ն ի

չսուրվէլմ, չսուրվալմ զը	չսիրիմ, չսիրէլմ զը
չսուրվէլս, չսուրվալս զը	չսիրիս, չսիրէլս զը
չսուրվա, չսուրվուա զը	չսիրը, չսիրիե զը
և ալլն.	և ալլն.

չգարտում, չգարտում զը
 չգարտուս, չգարտուս զը
 չգարտու, չգարտին զը և ալլն

Ա Ն Գ Յ Ա Ն Ի Մ Ա Յ Ա Ն Ի

Հստակացմ հր	Հսիրացմ հր	Հգարտուօրյմ հր
Հստակացր հր	Հսիրացր հր	Հգարտուօրյր հր
Հստակիւր և ալլն.	Հսիրիւր և ալլն.	Հգարտիւր և ալլն.

Պայմանական եղանակ

Ա Մ Ա Ն Ի

Հըմ ստակէլր	Հըմ ստակացր զը	Հըմ սիրիւր	Հըմ սիրէլր զը
Հըր »	Հըր »	Հըր »	Հըր »
Հը »	Հը »	Հը »	Հը »
Հըր ստակէլք	Հըր ստակացք զը	Հըր սիրիւք	Հըր սիրէլք զը
Հըր ստակւմք	Հըր ստակաք զը	Հըր սիրւմք	» սիրաք զը
Հըր ստակէլն	Հըր ստակացն զը	Հըր սիրիւն	» սիրէլն զը
Հըմ գարտուր	Հըմ գարտուր զը		
Հըր »	Հըր »		
Հը գարտուր	Հը »		
Հըր գարտուք	Հը գարտուք զը		
Հըր գարտւմք	Հը գարտուք զը		
Հըր գարտուն	Հը գարտուն զը		

Ա Ն Գ Յ Ա Ն Ի Մ Ա Յ Ա Ն Ի (պայմանական)

Հըմ ստակացր հր	Հըմ սիրացր հր	Հըմ գարթուօրյր հր
Հըր » հր	Հըր » »	Հըր »
Հըր ստակիւր	Հըր սիրիւր	Հըր գարթիւր
Հըր ստակացք հր	Հըր սիրացք հր	Հըր գարթուօրյք հր
Հըր ստակաք հր	Հըր սիրաք հր	Հըր գարտուաք հր
Հըր ստակացն հր	Հըր սիրացն հր	Հըր գարտուօրյն հր

Հարկադրական եղանակ

• Ա Մ Ա Ն Ի

Հըր ստակէլմ	Հըր սիրիւմ	Հըր գարտոււմ
Հըր ստակէլս և ալլն.	Հըր սիրիւս և ալլն.	Հըր գարտուս և ալլն.

Հրամայական

մը ստակէլր	մը սիրիւր	մը գարտուր
մը ստակւմք	մը սիրւմք	մը գարտաք

Գալ, աալ, լալ միավանկ բայերը Քարուսիի բարբառում, ինչպես Սվեդիայի, Քեսաբի և Արամոյի բարբառներում, սկզբից ստանում են «ու» ձայնավորը՝ ուկիլ, ուդիլ, ուլիլ: Բոլորն էլ ներկայում ունենում են «ում» վերջավորություն: Քանի որ ուանլ (ուդիլ) բայը նման է «տալ» բային, դնում ենք նաև նրա խոնարհումը՝ համեմատելու համար:

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա

ուկիլ—գալ

գէուկում—գալիս եմ

գէուկուս և ալլն.

գէուկը

գէուկութ

գէուկսք

գէուկուն

ուդիլ—տալ

գօուդում—տալիս եմ

գօուդուս և ալլն.

գօուդը

գօուդութ

գօուդսք

գօուդուն

ուլիլ—լալ

գէուլում—լալիս եմ

գէուլուս և ալլն.

գէուլը

գէուլութ

գէուլսք

գէուլուն

ուդիլ—ուտել

գէուդիւմ—ուտում եմ

գէուդիւս և ալլն.

գէուդը

գէուդիք

գէուդսք

գէուդին

Անցյալի անկատար

գէուկայմ իր—գալիս էի գօուդուօլմ իր—տալիս էի
և ալլն. և ալլն.

գէուկայր իր

գօուդուօլր իր

գէուկիր

գօուդիր

գէուկայք իր

գօուդուօլք իր

գէուկսք

գօուդսք իր

գէուկայն իր

գօուդուօլն իր

գէուլայմ իր—լալիս էի...	գէուդայմ իր—ուտում էի...
գէուլայր իր	գէուդայր իր
գէուլիր	գէուդիր
գէուլայք իր	գէուդայք իր
գէուլօք իր	գէուդօք իր
գէուլայն իր	գէուդայն իր

Ա ա ա ա ա

ուկիւտօր իմ	ուդիւտօր իմ	ուլիւտօր իմ	ուդիւտօր իմ
» իս	» իս	» իս	» իս
» լը	» լը	» լը	» լը
» իք	» իք	» իք	» իք
» լօք	» լօք	» լօք	» լօք
» ին	» ին	» ին	» ին

Ա ն ց չ ա լ ի ա ա ա ա ա

ուկիւտօր լայմ իր	ուդիւտօր լայմ իր—տալու էի...
» լայր իր	» լայր իր
» լիր	» լիր
» լայք իր	» լայք իր
» լօք իր	» լօք իր
» լայն իր	» լայն իր

ուլիւտօր լայմ իր	ուդիւտօր լայմ իր—ուտելու էի...
» լայր իր	» լայր իր
» լիր	» լիր
» լայք իր	» լայք իր
» լօք իր	» լօք իր
» լայն իր	» լայն իր

Հարակատար—վաղակատար

իդէնձ իմ	դըվէնձ իմ	լացէնձ իմ	գիրէնձ իմ
» իս	» իս	» իս	» իս
» ը	» ը	» ը	» ը
և ալլն.	և ալլն.	և ալլն.	և ալլն.

Անցյալի հարակատար—վաղակատար

իզէնձ	ալմ իր	դըվէնձ	ալմ իր	լացէնձ	ալմ իր	գիրէնձ	ալմ իր
»	իս	»	իս	«	իս	»	իս
»	իւր	»	իւր	»	իւր	»	իւր
»	ալք իր	«	ալք իր	»	ալք իր	»	ալք իր
»	անք իր	»	անք իր	»	անք իր	»	անք իր
»	ալն իր	»	ալն իր	»	ալն իր	»	ալն իր

Անցյալ կատարյալ

իզա	դըվա	լացա	գիրա	գիրուա	զը
իզիր	դըվիր	լացիր	գիրուր	գիրէուր	զը
իզըք	իզէլը	իլուց	գիրու	գիրէու	զը
իզուք	դըվուք	լացուք	գիրուք	գիրէուք	զը
իզանք	դըվանք	լացանք	գիրանք	գիրաք	զը
իզէլն	դըվէլն	լացէլն	գիրուն	գիրէուն	զը

Ուշադրության արժանի են լալ և ուտել բայերի անցյալ կատարյալ ձևերը, որոնք, եթե հաշվի առնենք Քաթուսիի բարբառի հնչյունական ձևափոխություններն ու օրհնքները, բոլորովին նույնն են գրաբարի ձևերի հետ (լացի, լացեր, կլաց, լացաք, լացիք, լացին, կիրա, կիրար, կիրաւ, կիրաք, կիրալք, կիրան): Այս դեպքում հաշվի պետք է առնել, որ Քաթուսիի բարբառում գրք. «ի»-ն բառավերջում լինում է «ա», շեշտի տակ փակ վանկում ն-ից առաջ՝ էլ, ք-ից առաջ՝ ա, «ե»-ն նախաշեշտ վանկում լինում է «ի», «ա»-ն շեշտի տակ լինում է «ու» (լացա, իլուց, լացուք, լացաք, լացէլն և ալլն):

Պայմանական եղանակ

Ա պ ա ո ն ի

գուկում	գուդում	գուլում	գուդիմ	գուդէլմ	զը
գուկուս	գուդուս	գուլուս	գուդիս	գուդէլս	զը
գուկը	գուդը	գուլը	գուդը	գուդիք	զը
գուկուք	գուդուք	գուլուք	գուդիք	գուդիք	զը
գուկանք	գուդանք	գուլանք	գուդանք	գուդէլք	զը
գուկուն	գուդուն	գուլուն	գուդին	գուդէլն	զը

Ա Ն Գ Լ Ի ա պ ա ո Ն Ի

գուկայմ իր—կգալի	գուգուօլըմ իր—կտալի	գուլայմ իր—կլալի
գուկայր իր	գուգուօլըր իր	կուլայր իր
գուկիր	գուգիր	գուլիր
գուկայք իր	գուգուօլըք իր	գուլայք իր
գուկանք իր	գուգանք իր	գուլանք իր
գուկայն իր	գուգուօլըն իր	գուլայն իր
	գուգայմ իր—կուտեի	
	գուգայր իր	
	գուգիր	
	գուգայք իր	
	գուգանք իր	
	գուգայն իր	

Պայմանականի ձևերը հաճախ գործածվում են նաև որպես սովորական ներկա և անցյալի անկատար (սահմանական եղանակի)։

Հարկադրական եղանակ

բըր ուկում	բըր ուգում	բըր ուլում	բըր ուղիմ
բըր ուկուս	բըր ուգուս	բըր ուլուս	բըր ուղիս
և ալլն.	և ալլն.	և ալլն.	և ալլն.

Ա Ն Գ Լ Ի ա պ ա ո Ն Ի

բըր ուկայմ իր	բըր ուգուօլըմ իր	բըր ուլայմ իր	բըր ուգայմ իր
բըր ուկայր իր	բըր ուգուօլըր իր	բըր ուլայր իր	բըր ուգայր իր
և ալլն.	և ալլն.	և ալլն.	և ալլն.

Այս ձևերը գործածվում են նաև որպես սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի։

Բղձական

Բղձական եղանակի ձևերը ալն հիմնական ձևերն են, որոնց վրա մասնիկներ ավելացնելով կազմվում են սահմանական ներկայի, անցյալի անկատարի, պայմանական և հարկադրական եղանակների ձևերը։

Ա պ ա ո ն ի

ուկում—գամ	ուգում—տամ	ուլում—լամ	ուգիմ—ուտեմ
ուկուս	ուգուս	ուլուս	ուգիս
ուկը	ուգը	ուլը	ուգը
ուկութ	ուգութ	ուլութ	ուգիք
ուկածք	ուգածք	ուլածք	ուգածք
